



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>


GRAD
EREN
409
BUHR

A 989,430

9







ՄԻՈՒԹԻԻՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՄԱՂՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԲԱՐՏՆԵՐԻ ՕՐՄԱՆԵԱՆ

ՈՐՏՈՍՆԵԱԼ

Ի ԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅԻՒՍԿԻՏԱՐ


Ի 17 Նոյեմբերի 1879



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԽ
ՇՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՑ ԳԱՎԱՅԵԱՆ

1879

UNIVERSITY OF YEREVAN



Ormanean, Maghakia

Mintian hayutcan lanaxhosoy

ՄԻՈՒԹԻԻՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՆ

ՄԱՂՍՔԻԱՅ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՕՐՄԱՆԵԱՆ

ՈՐՏԱՍԱՆԵԱԼ

Ի ԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅԻԻՍԿԻՏԱՐ

Ի 17 Նոյեմբերի 1879



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՑՊԱԳՐՈՒԹԻՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՑԵԱՆ

1879

Grad

EREN

409

BUHR

ՔՐԱԺ

Տեւորք և Տիրուհիք

Միւսանգամ կու գամ ձեր մէջ, ձեր ընկերութեան հրաւիրմամբը պատուեալ, միւսանգամ կու գամ և կրկնապատիկ քաջալերութեամբ. որովհետեւ փորձով տեսայ և իմացայ, թէ ձեր ազնիւ սիրտը մտադիւր ներողամիտ կ'ըլլայ խօսողին թերութեանց, և համար չը պահանջեր իրմէ հմտութեանց պակասութեան մասին. այլ ազգասիրական ըղձիւք վառեալ գոհ կ'ըլլայ՝ որ բանախօսն երկրորդէ իրեն այն քաղցր և թովիչ անունները, որ այսօր ամենուս ալ սիրտն ու միտքը գրաւած են: Քանի որ, ազգասէր ունկնդիրք իմ, քանի որ դուք այսպէս կը քաջալերէք բանախօսները, անոնք ալ համարձակութիւն կ'ստանան, և եթէ ներելի է ամենայն ինչ հրապարակաւ խոստովանիլ, անմեղ հնարագիտութեամբ մը փառաւոր նիւթ մը ընտրելով՝ միտքերը կը գրաւեն և խօսքերնին ընդունելի կը գործեն: Բայց խոստովանութիւնն ալ իւր օգուտն ունի, այն է ներողամտութիւն վաստկիլ: Ներեցէք ուրեմն և դուք ինձ, եթէ կրկին այսօր ձեր առջև Հայութեան վրայ խօսել որոշեցի, այն Հայութեան վրայ, որուն ի ներկայիս կ'աշխատիմք նոր կացութիւն մը տալ յանդիման աշխարհի:

Նոր չէ Հայերուն՝ Հայութեան համար աշխատիլը, և երկու դարէ ի վեր հոս և հոն զանազան ջանքեր թափուեցան և փորձեր գործադրուեցան, որպէս զի օգուտ մը գործուի Հայ ազգութեան. մանաւանդ թէ երկդարեան միջոցէն ալ առաջ Հայութեան համար աշխատանքը չպակսեցաւ. և ուր ներգործական և արի գործունէութիւնը կը պակսէր, կրաւորական և տոկուն

գործունէութիւնը անպակաս էր : Այդպէս կ'անուանեմ Հայուն անվկանդ հաստատութիւնը և իւր տառապանաց համբերատար տոկայը , առանց լքանելոյ լինիլ ինչ որ էր , և առանց կորուսանելոյ իւր հնաւանդ գոյութեան հիմը կազմող պարագաները :

Այդ միջոցին մէջ , որ լոկ կրաւորական և տոկուն գործունէութեան միջոց մըն էր , Հայուն միտքը ամենեւին Միութեան գաղափարներով չտողորուեցաւ : Նոր արգիւնք մը արտադրելու փորձ չէր փորձուեր , որ միացեալ զօրութիւնք ի հանդէս հրաւիրուէին . այլ իւրաքանչիւր մաս , իւրաքանչիւր անհատ , իւրաքանչիւր տարր , մի միայն իւր գոյութեամբը՝ վշտաց և նեղութեանց գետացեալ հեղեղաց դէմ թումք մը պիտի ըլլար , և անոնք որ այս սրբազան և դժուարին , թէպէտ ոչ պայծառ և քիչ լուսաւոր , նպատակին կ'աշխատէին , ամենքն ալ իրենց անձին համար աշխատելով իսկ կըրցան օգուտ մը պտղաբերել :

Երբոր այդ նախնիք , բարձրաբերձ շինուածոյ մը հիմեղող կոշտ քարերու նման՝ ոյք հողոյն ծոցը թաղեալ կը մնան և ոչ փառք կ'ընդունին և ոչ կը յիշուին , երբոր այդ նախնիք՝ իրենց գործը հաւատարմութեամբ կատարեցին , և մեր ազգութեան շէնքին ներքին որմերը բարձրանալ սկսան , միութեան ձայնը ամենուստեք հնչեց , վասն զի առանց անոր անհնար էր գործ մը կատարել , ինչպէս առանց շաղախի որմ մը բարձրացնել անհնար է : Այդ միութիւնը , զոր դարէ մը ի վեր եւս առաւել կրկնել սովորեցան Հայազգիք , կը նկարագրուէր այն ատեն իբր իմացական միութիւն , սիրոյ միութիւն , սրտի միութիւն , ըղձից միութիւն , բաղձանաց միութիւն , մէկ խօսքով միութիւն մը որուն պահապան անցնիւր առաքինութիւնն էր , և ասպարէզ անցնիւր սիրտը :

Այն ժամանակաց ազգասէր ազգայինք և ազգային բարւոյն համար աշխատող անձինք, այդ շրջանէն դուրս չելան, և իրենց փոյթն ու ջանքը քիչ շատ իմացական պարունակի մը մէջ յածեցան. ինչպէս երկնից լուսաւորք՝ որ երկնակամարին զարդերն են, այլ մեր աչաց ցրիւ և խառն կը ներկայանան և հազիւ աստեղագիտին հաշիւները մեր միտքը կը լուսաւորեն՝ թէ անոնց մէջ միութեան յարաբերութիւն մը կայ, եթէ աշուրնիդ անցեալ դարուն վրայ դարձնէք և փնտռէք թէ ինչ կապակցութիւն ունէին յայնժամ Հայութեան մասերը իրարու մէջ, դուք ալ պիտի տեսնաք, հոս բարգաւաճ ճեմարան մը, հոն ուսումնատենչ միաբանութիւն մը. հոս ազգանուէր անձեր, հոն ազգասէր ախոյեաններ. հոս իմաստուն մատենագիր մը, հոն քաղաքագէտ խորհող մը. հոս բաղձանք, հոն գործվերջապէս պիտի տեսնաք շատ մը ընտիր ձիրքեր, ընտրելագոյն գործեր, ամենընտիր ազգայիններ. բայց աղէ, փնտռեցէք եւս թէ ի՞նչ միութեան կապ կայր ասոնց մէջ, և ուրիշ կապ մը չէք գտնար, բայց եթէ սրտի և ըղձի կապ մը, իմացական միութիւն մը:

Ներհուն մատենագիրը որ իւր կղզեկին մէջ անքուն կը տքնէր Հայութեան օգտակար և ընտիր գործեր հրատարակել. արի շահատակը որ ձիթենւոյ խաղաղութեան նշանաբանը քաջութեան սրովն կը պաշտպանէր և Հայութեան օգտակար քաջարի իղձը վառ կը պահէր. քաջ հովուապետը որ Հայութեան կեդրոն մը ձեւացնելու համար գիտէր խաչն ու սուրն ու գրիչը ի մի խառնելով աշտարականման զօրութիւն մը կազմել. խոհական սեղանաւորը որ իւր առատ դրամովն կը բաղձայր Հայութեան օգտակար հաստատութիւն մը հիմնել, և նուազեալ Հայութեան յարութիւն տալու համար խորհուրդ կը հայցէր, ըսէք աղէ, ունկնդիրք

իմ, ըսէք դուք որ ազգային իրողութեանց և անցից անտեղեակ չէք. ըսէք, թէ քնչ միութիւն ունէր Հայութիւնը այդ հաւասարապէս գովելի և հաւասարապէս երախտապարտ որդւոցը մէջ: Իւրաքանչիւրն ի նոցանէ առանց իրիք յարաբերութեան ընդ միւսոյն, միայն ըղձիւքն և սրտիւ ձգտեալ առ այն բարձր բարին, որ Հայութիւն և ազգութիւն կը յորջորջի, ինքն իրեն կարծես թէ փոքրիկ հիւլէ մը կ'արտադրէր, և թող կու տայր զայն ընդարձակ անէութեան ասպարիզին մէջ, որ տարուբերեալ և ծփեալ ըստ բաղդին յորձանաց, նախախնամ էակի մը առաջնորդելով երթայ գտնայ իւր դադարը գոյութեան կեդրոնին վրայ, զոր ինքն չէր տեսներ, և որոյ լինելութեան վրայ իրական գիտութիւն մը չունէր, որուն Հայութեան անուն կու տայր, այլ թէ զքնչ էր և ո՛ւր, չէր գիտեր պարզ կերպով բացատրել:

Այսպէս կ'իմանամ ես իմացական և ըղձական միութեան գաղափարը, որ Հայութեան Միութիւն անուամբ վերջին դարուս մէջ տիրեց, Չեմ անարգեր զայն և ոչ իսկ կը մեղադրեմ: Այդ առաջին աստիճանն էր ներգործական գործունէութեան և միութեան, որ կրասրական գործունէութեան և միութեան շրջանին աւարտելէն ետքն կ'սկսէր յերեւան գալ: Գովեմք ժամանակին պարագայից համեմատ գործել կրցողները, նուիրեմք իրենց մեր անկեղծ երախտագիտութեան զգացմունքը և բացատրութիւնները, և յորդորուիմք անոնց օրինակէն, ոչ թէ ճիշդ անոնց ըրածն ընելու, այլ անոնց նման ժամանակին պահանջածն ընելու:

Հայութեան Միութիւնը աւուրս բանախօսութեան նիւթ առած ըլլալով, — ինչպէս որ հրատարակեալ ծանուցմունք զայն ձեզ իմացուցին, — և ցարդ տիրապետող միութեան գաղափարին պարտուպատշաճ յարգան-

քըս վկայելէն ետքը, — ինչպէս ցարդ բացատրեցի, — պէտք մը կ'զգամ պարզապէս և մեկին յայտարարել, թէ երբ Հայութեան Միութիւն կ'ըսեմ, չեմ կրնար այլ եւս բաւական սեպել այն իմացական և առաքինական միութիւնը՝ զոր ըզձիւք կը տածէ ոք և մտքով կը նկատէ : Բաւական ժամանակներն յառաջեցին, և վերջին տարիներս ի լոյս ընծայեցին զոր վերջին դարերը կ'երկնէին, Հայութիւնը, ո՛չ եւս վերացական բառ մը, և ո՛չ եւս հնախօսական յիշատակ մը, այլ հողովելոյ իննեւտասաներորդ լուսաւոր և քաղաքական դարու, լուսաւոր և քաղաքական արդեանց նշանակ : Այսօր Հայութիւնն իրական ինչ է, և իրական ինչ լինել կը ձգտի, իմացական պարունակը՝ այլ իրեն համար չէ. միութիւն մը կը պահանջուի Հայութեան համար իրական և զգալի, գործնական և հիմնական, վարչական և տեղական : Բայց խօսից կարգը չկանխեմ, որպէս զի տակաւ առ տակաւ պարզաբանելով, կարող ըլլամ, թէ՛ ճիշդ գաղափարս արտայայտել, և թէ՛ թիւր իմացուածոց առաջքը առնուլ :

Մի էր երբեմն, եղբարք, մեր Հայաստանը, և մի էր Հայութիւնը ի սփիւռս մեր երկրին . բայց այն ատեն միութեան հիմն ու կեդրոն եղող քաղաքական գոյութիւնը ունէր, և Հայկազնեան և Արշակունեան հարստութիւնք իրենց արքունի մականին իշխանութեան ներքեւ կը միաւորէին ամէն Հայերը և բոլոր Հայութիւնը : Այն օրը ելլալ և Հայութեան միութեան վրայ խօսիլ ո՛չ նպատակ կրնար ունենալ և ո՛չ օգուտ :

Բազրատունի իշխանք, որ Հայաստանի վրայ թագկապեցին, Հայութեան ամբողջութեան վրայ չկրցան իշխել . և շատ աղէկ կրնամ ենթադրել որ տասներորդ դարուն մէջ հայասէր անձինք կարող լինէին միութիւն քարոզել Հայութեան մէջ . և տեսնելով որ համազգի և

համոցեղ իշխանք թագ կապած են յԱնի և ի Կարս և ի վասպուրական, և իրարմէ անկախաբար նոյն Հայութիւնը պաշտպանել կը կարծեն, և յանուն նոյն Հայութեան իրարու դէմ սուր և նիզակ կը շողացնեն, իրաւունք կրնային ունենալ, կ'ըսեմ, Հայութեան միութիւնը յիշել տալ անոնց, և եղբայրասպան գործերնէն յետս կասեցնել: Այդ օրէն ի վեր Հայութեան իրական միութիւնը խախտեցաւ, և երբ Ռուբինեանք Կիլիկիոյ լեռանց ամրութեանց ապաւինեալ Հայութիւն մը կազմեցին, տակաւին չկրցան և չյաջողեցան ընդարձակ Հայութեան կեդրոն լինել. մանաւանդ թէ իրենց իշխանութեան վերջին տարիները Լատինական յարաբերութեանց և Լատին անձանց միջամտութեամբ Հայութեան համար նոր անջատում մը նախապատրաստեցին, եկեղեցական բարձրաթոռ իշխանութեան բաժանմամբ: Հայաստան իւր տիրապետող ազգաց մէջ ալ բաժնուեցաւ. և թէպէտ առ ժամանակ մի միոյ միայնակ կայսերութեան տեսաւ զինքն բովանդակապէս հպատակ, բայց նորէն իրեն տէրերը մէկէն աւելի տեսալու պարտաւորեցաւ: Եւրոպական յարաբերութեանց կրկին զարգանալը՝ Եւրոպիոյ դաւանութեանց անշակերտելոյ դուռ բացաւ Հայութեան մէջ, և կարծես թէ չբաւեց իրենց մտաց և սրտից վրայ իշխանութիւն գործածել, և անքննելի Աստուածութեան և անտեսանելի հանդերձելոյն խորհրդոց պատմութեամբ գժտութիւններ պատճառել, քաղաքական դրից և բաժանմանց ալ շարժառիթ եղաւ. և Հայ ազգութիւնն տեսաւ իւր ծոցէն մասեր բաժնուիլ, որք նոր անուններով նոր ազգութիւններ ձեւացան և նոր քաղաքական դիրքեր ստացան. և որ չար եւսն է ընդդիմամարտ հակառակութեամբ միոյ միայնոյ Հայութեան ոյժերը ի զուր վատնել, և ներհակընդդէմ ուղղութեամբ ոչըն-

չացնել, ինչպէս ի բնագիտական և ի համարագիտական կարգի՝ նոյնաչափ բացասական և ստորասական զօրութիւնք և քանակութիւնք զիրեարս կ'ոչնչացնեն :

Կամաւ, սիրելիք, այսպէս վեր ի վերոյ կը խօսիմ, կամ թէ լաւ եւս ըսեմ, ինչ որ իմացնել կ'ուզեմ, լաւ կը համարիմ ակնարկութեամբ միայն ձեր մտաց առջև բերել, առանց հարկ սեպելու մանրամասնաբար իրողութիւնները պատմել : Այնպիսի գէպքեր կան՝ որոց պատմութիւնն իսկ ախորժ չէ . և ոչ միայն ախորժ չէ, այլ և պատշաճ ալ չէ . վասն զի որոց յանցանօք այն ամենայն գործուեցաւ, կամ պատմութիւնը դատած է արդէն զանոնք, և կամ պատմութեան խորոց մէջ այնպէս ծածկեալ և անյայտ եղած են, որ ծանրատաղտուկ է աշխատանքը՝ և անստոյգ ելքը՝ և անօգուտ ջանքը՝ զանոնք ի լոյս հանելու : Պատճառներն անցան, բայց հետեւանքները կը մնան, և այդ հետեւանաց որոնք որ մասնակից են՝ պատասխանատուութիւնը չեն կրեր . վասն զի ոչ իրենք, այլ ժամանակը առանց իրեանց կամաց կատարեց զայնս : Ինչո՞ւ ուրեմն սաստիկ խօսքերով յարձակիլ այդպիսեաց վրայ :

Այդ է ճիշդ պատճառն իմ հարեւանցի խօսիցս, սակայն կը յուսամ թէ իմացուածն ալ հարեւանցի եղած չէ . վասն զի գուք կարի լաւ կրցայք իմանալ թէ ինչ է իմ միտքս, և ինչպէս կը նկատեմ ես մեր արդի բաժանմանց վիճակը : Այդ խօսքերս պարզ են, և կը կարծեմ, թէ ոչ ոք կրնայ այլ ընդ այլոյ իմաստ մը տալ իմ ըսածներուս, և ոչ իսկ ենթագրել թէ ես Հայութեան միութիւնը իրական ուզած ատենս, կարող ըլլամ անոր բռնական միութեան իմաստ տուած ըլլալ, և ուզել և պահանջել որ ամենայն Հայ բռնադատեալ ըլլայ իրարմէ տարբերութիւն չունենալ ոչ տեղեալ, ոչ բնակութեամբ, ոչ սովորութեամբ, ոչ կարծեօք :

ոչ քաղաքաւ , ոչ եկեղեցեաւ , այլ յամենայնի և ըստ
ամենայնի միաձոյլ միութիւն մը կազմել : Չայս կ'ըսեմ ,
վասն զի չեմ անդ իտանար թէ նա՝ որ իմ խօսքերս մտիկ
կ'ընէ , կրնայ եղանակաւ իմն նաև իմ գործերէս զգած-
ուիլ . և տեսնելով զիս աշակերտ և գործադիր կատար-
եալ և ամենակատարեալ միութեան , այնպէս իմն են-
թադրել թէ զայդ իբր անտնօրինելի հրաման մը և հարկ
մը կ'ուզեմ ամենուն վրայ ծանրաբեռնել : Չեմ քաշուիր
ըսել յայտնապէս , թէ « կամէի զի ամենայն Հայ լինէր
իբրև զիս » ի մասինս , ինչպէս երբեմն Պօղոս դարձեալ
առնելեաց խնդիրի մը մէջ կ'ըսէր , թէ « կամէի զի ա-
մենայն մարդ լինէր իբրև զիս » : Բայց և միանգամայն
կը յարեմ , թէ Հայութեան միութեանը համար՝ ոչ ա-
մենայն ինչ որ օգտակար է , անտնօրինելի եւս է . և ոչ
ամենայն ինչ որ ի շինութիւն է և ի շահ , հարկ է որ
պարտաւորիչ եւս ըսուի : Կան կետեր ուր անցնիւր ա-
զատութեան սկզբունքը պէտք է յարգեմք . սակայն
առաւել մեծ և ընդհանուր բարւոյ մը տեսակէտին ներ-
քեւ այդ ազատութիւնն ալ զոհելն , պէտք է որ մեր
և ամենեցուն դատաստանաւ իբր գովելի հռչակուի և
իբր հետեւելի ցուցուի : Ներեցէք որ ալ առաջ չեր-
թամ : իբր անտարբեր բանախօս չէի կրնար քանի մը
խօսք չգրուցել . որովհետև ինչ որ եղաւ և ինչ որ գոր-
ծուեցաւ , իմ անձնական գիւտս չէ , և ոչ ալ իմ ար-
դիւնքս . այլք յառաջագոյն քան զիս անոր գաղափա-
րը ունեցան , և եռանդագոյնք քան զիս այդ գաղա-
փարը գործադրեցին . և ես չեմ այնչափ յանձնապաս-
տան , որ ուրիշներու արդեանց ձեռներէց յափշտակող
լինիմ : Դառնամք ուրեմն մեր խօսից կարգը :

Միութեան ներհակը կրկին է , բաժանում և ան-
միաբանութիւն . բաժանում՝ նիւթական է , իսկ անմիա-
բանութիւն տեսական է . սակայն մին իբրև զմիւսն ի-

րական , և միութեան բարոյն իրականապէս թշնամի .
և զայս հարկ չունիմ ամենեւին ունկնդրացդ մեկնաբա-
նել : Այդ սկզբունքը ձեր սրտից մէջ լաւ ամրացեալ է ,
և զգածմունք և ուսմունք ի սոյն զձեզ համոզած են :
Հայութեան միութիւնը մեկնաբանելու համար հարկ է
ինձ նախ խնդրոյն հոգին և նպատակը գտնալ , և ցու-
ցընել , և ճշդել . որոշել կացութիւնը յորում մեք կը
գտնուիմք , և զգալի կերպով շօշափել և շօշափել տալ
թէ ինչ վիճակի մէջ է այսօր Հայութիւնը իւր միու-
թեան նկատմամբ : Մոռնամք այն ժամանակները , եղ-
բարք , որ բանախօսք և ասե՛նաբանք և քարոզիչք վե-
րացեալ սկզբունք մը կը մեկնէին իրենց ունկնդրաց ,
առանց շատ հոգ տանելու թէ այն սկզբունքը յարմար
է թէ ոչ իրենց ունկնդրաց գասուն , կամ թէ այն ուն-
կընդրաց գասը կը գործադրէ թէ կ'արհամարհէ այն
սկզբունքը , կամ թէ նոյն սկզբունքը իրեն յարմար է ,
կամ թէ վիճակին կը ներէ որ նոյն սկզբանց հետեւին :
Այդպիսի խօսակցութիւնք մեծաւ մասամբ ընդ օդս կը
ցնդէին , և աւելորդ կրկնութիւններ էին : Իմ միտքս
չէ գալ և ձեզի միութեան գովեստը ընել , կամ
թէ վերացական միութեան մը պայմանները պարզաբա-
նել . գիտեմ թէ դուք իրաւամբ կրնայք յայնժամ զը-
լանալ ինձ ձեր բարեսէր և բարեմիտ ունկնդրութիւնը .
բայց այժմ գոնէ իմ բարի գիտաւորութիւնս յարգել-
նիդ կը խնդրեմ , և մի խստիւ վարուիլ ընդ իս ի մա-
սինս , եթէ յակամայս կ'ստիպուիմ երբեմն գլթել , որով
ես զայլս եպերել կը համարձակիմ և զոր իբր եպերելի
ձեր առջեւ կը դնեմ :

Հայութեան միութիւնը , որ նախնաբար բաժան-
մամբ կը ֆնասուի , այսօր արդեամբ այդ չարիքը կը
կրէ . վասն զի բաժանեալ եմք Հայքս եկեղեցեաւ , բա-
ժանեալ եմք ազգաւ , բաժանեալ եմք տեղեաւ , բա-

ժանեալ եմք պետութեամբ, բաժանեալ եմք լեզուաւ, բաժանեալ եմք իշխանութեամբ. թող զայլ եւս բաժանմունս՝ զորս յիշել տաղտկալի է, իսկ դիզարանել լքուցիչ եւս կը լինի:

Բաժանեալ եմք Հայքս եկեղեցեաւ: Այդպէս կ'անուանեմ Քրիստոսադաւան հաւատացելոց մասերը, յորս կը բաշխին քրիստոնեայք՝ որք դաւանութեանց ձեւերով և բառերով և իրաւասութեանց տարածման կերպերով իրարմէ կը զատուին: Հայաստանեայցս եկեղեցւոյ հոգւոյն հետեւելով, և բարձրաստիճան պաշտօնական և մեզ ամենեցուն սիրելի և պատկառելի Առձին բացատրութեանց նմանողութեամբ, չեմ'կրնար իբր տարբեր կրօնս ընդունել երկու կամ աւելի կերպ քրիստոնէութիւնները, որոց հիմունքը տարբեր չեն. սակայն այդ շարդ ելեր, որ տակաւին բաժանում մը գոյացնեն Հայութեան մէջ Հռովմէական եկեղեցւոյ հետեւողութիւնը և հպատակութիւնը, ինչպէս նաեւ Բողոքական եկեղեցեաց աշակերտութիւնը: Հռովմէական եկեղեցւոյ հետեւողութիւն և հպատակութիւն ըսի, ոչ իբր նոյնանշան նկատելով այդ բառերը, վասն զի դուք քաջ գիտէք, թէ ոմանց կատարեալ հպատակութիւն ընդունիլը, և այլոց պարզ հետեւողութեամբ գոհանալը, նոյնինքն Հռովմէական դասուն մէջ կրկին տարածայնութիւն պատճառեց. տարածայնութիւն մը՝ որ կրնար թերեւս գեղեցիկ արդիւնքներ պտղաբերել ինպաստ միութեան Հայութեան, այլ վերջէն նոր բաժանում մըն ալ հիմնելու հակամիտեցաւ, իսկ այժմ չեմ գիտեր ճշդէլ թէ ուր պիտի կարենայ յանգիլ: Եկեղեցեաւ բաժանելոց մէջ հարկ էր Հայհոռոմներն ալ յիշել, սակայն իբր ի յիշատակ միայն. վասն զի բարեբաղդաբար կարի նուազ է այդպիսեաց թիւը, որք և ոչ նշանակութիւն և ազդեցութիւն ունեցող տարրի մը պէս կը ներկայանան մեր առջև:

Գիտեմ թէ պէտք է որ յարգեմ այն կրօնական և դաւանութեան ազատութիւնը, զոր դարուս լուսաւորութիւնը կը քարոզէ. և իբր Հայաստանեայց ներողամիտ և ազատամիտ եկեղեցւոյ սպասաւոր, պէտք իսկ կ'զգամ յարգել այնպիսի բաժանմունքներ՝ զորս նա չդատապարտեր իբր աններելի անջատումն ի ճշմարիտ քրիստոսեան եկեղեցւոյ. սակայն ո՛չ ապուքէն իբր հայազգիք և Հայութեան միութեան անձնուէր հետեւողք՝ իրաւունք ունիմք ցաւիլ և ցաւակցիլ, որ այսպիսի բաժանմունք կրցան զմեզ նսեւ ազգաւ բաժանել, ոչ թէ պաշտօնական և արտաքին ձեւով միայն, այլ և իրօք և արդեամբ: Կրցան Հայութեան մէջ նոր կեդրոններ ստեղծել, որք հին կեդրոնին գիմամարտ ուղղութիւններ ունեցան, և ոչ թէ ներքին յառաջադիմութեան բաղձանօք միայն աշխատեցան, այլ մարտնչողական գիրքով մը հին կեդրոնին զնաւելու միտեցան. և եղբայր եղբօր դէմ, իբրեւ թշնամի թշնամւոյ՝ կամ իբրեւ ազգ ազգի դէմ, կռիւներ և խնդիրներ յարուցին և մղեցին: Ուր միացեալ զօրութիւնք մի Հայութիւնը պիտի զօրացնէին, բաժանեալ զօրութիւնք Հայութիւնը փեռեկեցին. և Հայ Հայու դէմ կրցաւ ըսել. Ես քու ազգէդ չեմ:

Գիտեմ և խոստովանիմ թէ բազմաթիւ և ազնուախոհ անձինք՝ այդ տարօրինակ գրից հպատակելով իսկ, կրցան ներել որ դէպքը և ժամանակը զիրենք մասնաւոր եկեղեցւոյ մը զաւակ ընեն, իսկ իրենց սիրտը և իրենց զգածմունքը չուրացան. և ոչ միայն աշխատեցան և կ'աշխատին որ այդ սխալ ուղղութեանց արդիւնքը չժաւայի, այլ և անհատաբար փոյթ տարին և կը տանին որ և իցէ առթի մէջ իրենց նպաստը և գործակցութիւնը բերել յօժանդակութիւն միակ Հայութեան, ընդունելով և յանձնառու լինելով գործել

ի համեմատութեան և ի համամտութեան ընդ հին և մեծ կեդրոնին Հայութեան :

Այդ պիսիններէն շատերը աշխարհածանօթ են, շատերը յանուանէ գիտեմ, և դուք եւս դեռ շատերը կրնայք գիտնալ՝ զորս ես չեմ գիտեր. սակայն երկու պարագայք կան՝ զորս այդ պիսեաց նկատմամբ անկեղծութեամբ պէտք է նշանակեմ: Ինչ որ իրենք կ'ընեն մեծ է և դիւցազնական, վասն զի առաւել դժուարութեանց ներքև կը գործեն. սակայն, մինչ իրենք անհատաբար ազգայնութեան համար իրենց պարտքը կը վճարեն, իշխանութիւնը՝ որուն սովորաբար իրենք և իրենց գործերը ենթարկուած են, կ'առաջնորդէ՞ արդեօք նոցա իրենց ըզձից ուղղութեան մէջ: Եւ եթէ չառաջնորդեր, ո՞չ ապաքէն բազմօք կը կորսուի իրենց գործոց ազդեցութիւնը ազգայնութեան նկատմամբ: Եւ դարձեալ, զի է զի այդ պիսիք պարտք մը կ'զգան թաքնութեան և գաղտնութեան վարագուրի մը ներքև ծածկել իրենց անունը, և յաճախ նաև իրենց գործերը. ինչո՞ւ կը վախնան յանօգուտ խօսից՝ ի զննութեանց և ի խորհրդածութեանց, որք կրնան կատարուիլ ի կողմանէ իւրեանց եկեղեցական կամ ազգապետական իշխանութեանց, և նաև ի կողմանէ իրենց գաւանակից ընկերաց: Ի՞նչ է սղէ՛, այդ պարագայից նշանակութիւնը, որոց գոյութիւնը ոչ ոք կրնայ ուրանալ: Եւ եթէ այդ պարագայք կան, ո՞չ սպաքէն անոնց հետեւութիւնը միշտ փնաս մըն է, գոնէ նուազ օգուտ, վասն Հայութեան:

Ահաւասիկ իմ տեսութիւններս Հայոց եկեղեցական բաժանմանց նկատմամբ. իմ տեսութիւններս ազգասիրի տեսութիւնք են, և աներկբայ եմ թէ ազգասիրացող գգածմանց մէջ անոնց արձագանքը պիտի հնչէ. այս պատճառաւ ալ անպատրուակ կը յայտնեմ իմ միտքս, առանց շրջաբանութեանց դիմելու: Կրօնքը աստուա-

ծային հաստատութիւն մի է . ըստ որում ոչ միայն կը նպաստէ հանդերձեալ աշխարհի կացութեան , զոր Աստուած եղ յիւրում իմաստութեան . այլ և ըստ որում կը նպաստէ այս աշխարհիս կացութեան և ազգային ընկերութեանց հաստատութեան , զորս Աստուած օրինադրեաց յիւրում նախաինամութեան : կրօնք՝ որ աստուածային գործոց լրման չհամապատասխաներ , կրօնք՝ որ աստուածահաստատ դրութեանց վախճանին չնպատեր , կրօնք՝ որ աստուածագիր օրինաց գործադրութեան չօժանդակեր , ի զուր կը ճգնի տէրունեան սրբազան նշանաւն պանծալ : Բարէ . բաւ է Հայոյն թըշուառութեան զի Արարացի Մարգարէի հաւատքը գողացաւ իրմէ անթիւ զաւակաց բազմութիւններ . ինչո՞ւ Քրիստոսի հաւատքն ալ գործի ընել Հայութենէ նոր մասեր բաժնելու : Միթէ սիրոյ և միաւորութեան և միութեան հաւատքը չէ , զոր աւետարանն կը սորվեցնէ ամէն քրիստոնէի , որն և ըլլայ իւր դաւանութեան ձեւը :

Աղէ , Հայեր , մի բաժնուիք ազգաւ յանուն Քրիստոսի , այլ պատուեցէք զՔրիստոս ձեր միութեամբ , թէպէտ և տարբեր կարենան ըլլալ և մնալ ձեր կարծիք և տեսութիւնք ի վերայ իրաց՝ « զոր ակն ոչ ետես , և ունկն ոչ լուաւ , և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ » քննել և զննել և իբր զգործս բնութեան մտօք սահմանել : Բայց ես ինչո՞ւ կ'շտապեմ : Միութեան գործադրութեան պայմանները բանախօսութեանս երկրորդ մասին նիւթը պիտի ըլլան . մեք տակաւին պէտք է որ մեր բաժանմանց ցաւալի պատմութիւնները քաղեմք :

Բաժանեալ եմք այսպէս եկեղեցեաւ և ազգաւ , բայց բաժանեալ եմք եւս տեղեաւ և աշխարհաւ : Ո՞վ կրնայ թուել այն ամէն աղէտները որք պարտաւորեցին մեր նախահայրները պանդուխտ և նժդեհ լքանել եփ-

րատայ և Երասխայ ավուենքը, Արարատայ և Տաւրոսի հովիտները, Բզնունեաց և Գեղամայ ծովեզերքը, և տարադէմ ընդ ծով և ընդ ցամաք ցրուիլ դրացի և հեռաւոր աշխարհաց մէջ, և օտար երկնի ներքեւ տանիլ իրենց ընտանիքը և ընտանեկան յիշատակները: Այդ բաժանման չարագուշակ հետեւանքներէն մին եղաւ հեռացելոց կորուստը. վասն զի որք տարաշխարհիկ իրենց հայրենիքէն մեկնեցան և օտարայ մէջ բնակեցան, տակաւ առ տակաւ այն տեղեաց սովորութեանց և լեզուին, կենցաղավարութեան և ընտանեկան յարաբերութեանց վարժեցան, և ինչչափ ազգայնութեան նշանք պակսեցան, նոյնչափ օտարականութեան նշանք ընդարձակեցան. մինչեւ վերջինքս առջինները ողողեցին և ընկղմեցին, և նա՛ որ Հայ էր երբ դաղթակաւնութեամբ օտար երկրի մը մէջ հաստատուեցաւ, այսօր լեհացի է, Հունգարացի է, Իտալոցի է ըստ ամենայնի: Չարմանալի բան մը չէր եղածը. վասն զի եթէ Շամբաթայ, Ագրամեւլեքի, Սանասարայ և Մամգունի զաւակք, Հայաստանի մէջ մնալով բնիկ Հայազգի Բագրատունիք, Արծրունիք, Սասունցիք և Մամիկոնեանք կրցան ըլլալ, իրենց հրէական՝ ասորեստանեայ և ճեւացի ազգութիւնը կորսնցնելով, ինչո՞ւ բնիկ Հայազգին ալ օտարազգի չլլայ օտարազգեաց մէջ գաղթելով և անոնց հետ ազգախառնութեամբ ընտելանալով:

Բայց տեղեաւ բաժանեալ ըլլալնուս չար հետեւանքը միայն այս չէ, որ Հայութենէ մաս մը սպառնալու կորսուեցաւ. այլ նաեւ ուր Հայեր իբր Հայ կրցան մնալ, նոր մասնաւոր կեդրոններ սկսան կազմել, և գոգանկախաբար յիւրրաց պղտիկ Հայաստաններ ստեղծել, զօրութիւնը բաժնել, և երբեմն ալ պղտիկ և քիչ օգտակար տեղւոյ մը վրայ մեծամեծ զօրութիւններ թափել: Իրաւ է որ կրցան երբեմն յառաջադիմութեան

ցոյցեր տալ, և Հայաստանէ դուրս եղող Հայեր իրենց ազգին և աշխարհին պարծանք համարուիլ. բայց այդ ամենայն Հայաստանի և Հայութեան միութեան գոնէ անուղղակի ֆնաս բերաւ. վասն զի ոչ ոք այլ եւս կը յիշէր իւր նախնի հայրենիքը, և իւր օտարութեան մէջ ալ գոհ կրնար ըլլալ, երբ երբեմն լեզուաւ և երբեմն եկեղեցեաւ, և երբեմն սրտով ու մտքով զինքն Հայութեան հետ յարաբերութեան մէջ կը տեսնէր: Տեսական անմիաբանութեան արդիւնքը չէ այդ, այլ նիւթական բաժանման. բայց միթէ իրական ֆնաս մը չէ Հայաստանի և Հայութեան, որ ի բունին իւրում խեղճութեամբ կը հեծէ և չարաչար կը հարստահարուի, մինչ իւր պանդուխտ զաւակունք կրնան օտարութեան մէջ իրենց հանգիստը ճարել: Միթէ ֆնաս չեղան մեզի վերջին օրերուս մէջ ալ մեր նիւթական բաժանումէն: Երբ Հայկական խնդիրը ծագեցաւ և պետութիւնք մտաբերեցին Հայութեան համար բան մը ընել, Հայութեան երկիրը փնտռեցին: Շատ արդիւնք կրցաւ յառաջ բերել Հայն յատենի անդ, սակայն աւանդ, որ մեծաւ մասամբ Հայ երկրէ բաժանեալ էին այն գեղեցիկ նշանք և փաստք արժանաւորութեան, և մեր խնդիրը նուազ ազդու եղել գատաւորաց խղճին: Ուր էր թէ կէսը միայն բնիկ Հայ հողոյն վրայ գործուած ըլլար, և մեր հանրական բարիքը չարգելուէր. և նոքա որ մտադիւր էին Հայութեան բարւոյն դէմ կենալ, չկարենային Մէթէրնիքեան խրոխտաբանութեամբ Հայաստանը իբր հնախօսական իմն բացատրութիւն նկատել և պնդել, թէ ի զուր կը փնտռուի այսօր յԱսիա երկիր մը՝ որ բազմամարդութեամբ և բնակչութեամբ և կերպարանաւ Հայ կարենայ ըսուիլ և Հայաստան մը կազմել:

Ինչո՞ւ չցաւ իմ, եղբայրք իմ, ինչո՞ւ դուք ալ չըզ-

դածուիք երբ վայրկեան մը կը մտածէք թէ ինչուան ուր կը հասնին մեր բաժանմանց չարաչար ազդեցութիւնքը, յորոց զմասնս յիշատակեցի, բայց գեռ յիշատակելիքներ ալ կան. վասն զի ոչ միայն բաժանեալ եմք եկեղեցեալ, բաժանեալ եմք ազգալ, բաժանեալ եմք տեղեալ, այլ բաժանեալ եւս եմք պետութեամբ. բայց այն ալ դարձեալ մեր յանցանքէն չէ: Եթէ Արշակունի և Բագրատունի հարստութեանց ժամանակները ելնելով մտօք, կը տեսնէք որ Հայ նախարարներ իրարու դէմ նախանձաբեկ օտար բանակաց առաջնորդեցին ի Հայաստան, և դիտնալով և ուզելով՝ Հայաստանի վրայ օտարազգի տէրեր և տիրապետողներ հրաւիրեցին, և եթէ խորհիմք միայն մեր Ազգը մեղադրել Հայաստանի օտար իշխանութեանց ներքև իյնալու մասին, ըստ իս արդարադատ չեմք լինիր: Իրաց բարոյական բերումը այնպիսի իմն սաստիկ և բռնադատ օրէնք է, որ բնական կարգի օրինաց համահաւասար ոյժ ունի. և Հայոց այն ժամանակներուն մէջ ալ իրաց բերումը մեծ դեր խաղացած է: Չկարծեմք թէ երջանիկ և բարգաւաճ Հայաստանի իշխանք և բնակիչք յանկարծական չարութեամբ և կամակորութեամբ կրցան օտարին ձեռն տալ, և իրենց երկիրը օտարին յանձնել. այլ չարիք զիրեարս հալածեցին, ինչպէս « խորք խորոց կարդան » և տկարամիտք և անձնասէրք չարութեանց ամբոխման մէջ կրցան շուարիլ և շփոթիլ, և մեծագոյն չարիքը իբր նուազագոյն չարիք կամ իբր լոկ կարելի բարիք իրենց երկրին վրայ հրաւիրել. մանաւանդ որ այդ պարագայից մէջ իրենց անձնական բարիքն ալ հոգալ և նկատել փութացան:

Քաւ յինէն Մեհրուժաններու և վասակներու; Սարգիսներու և Կիրակոսներու շատագով կանգնիլ. Հայութեան զգաժմունքն իսկ չներեր ինձ այդպիսի ո-

ճիր մը գործել : Ես միայն իբր պատմութեան վրայ առանց կրից խորհող մը կը նկատեմ և կը յայտնեմ, թէ Հայաստան օտարաց մէջ լարաբաժին պիտի ըլլար թէև այդ մատնիչները չգտնուէին . սահմանակցաց զօրութիւնը , յարձակողաց բռնութիւնը , աշխարհագրական դրից պայմանները , ներքին կացութիւնը և տկարութիւնը , այդպիսի վախճանի ճանբայ բացեր էին . և երբ անգամ մը օտարաց լուծը Հայաստանը իրեն ներքև թողուց , ալ իրաւունք մը եղաւ , ձեռքէ ձեռք զայն փոխանցել բռնութեամբ կամ խաղաղութեամբ , զէնքով կամ դաշնագրով , տկարութեամբ կամ յօժարութեամբ : Ահաւասիկ ձեզ Հայաստանի պատկերը , որոյ սրտէն կ'անցնին երկից ինքնակալութեանց սահմանագլխոց գիծերը : և որոյ մարմնոյն նորանոր վէրքեր կը պատճառեն՝ ժամանակ ժամանակ այդ գիծերը փոփոխելու համար նորէն զարնուած նշանակէտ ցիցերուն հարուածները :

Այլ թէ ցոր վայր մեք այդ բաժանման չարագուշակ ազդեցութիւնները կ'զգամք , զայն հարկ չէ բացատրել ձեզ՝ որ թէ փորձառութեամբ և թէ խորհրդածութեամբ կրցած էք անոր հետեւանքները կշռել , կարծես թէ ծառայութեան մէջ ալ միտարարական է միոյ միայնոյ տիրոջ սպաս տանիլ , և գիտնալով իւր որոշ վիճակը՝ ըստ այնմ տրամադրել իւր ներկայն , և միակերպ ուղղութեամբ և սկզբամբ իւր ապագային համար աշխատիլ : Աւետարանական առածը՝ թէ « Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել » , որ անհնարութիւն մը կ'ուզէ արտայայտել , Հայութեան վրայ գործադրեալ եղելութիւն մը դարձաւ , անխախտ պահելով իրաւաբանական անհնարութիւնը , որ ճշմարտութիւն մի է յաւիտենական , և բռնաբարելով միայն իրաց բնական ընթացքը , և անբնական դրից պարտաւորելով Հայու-

Թեան մարմնոյն անդամները . ինչպէս կրնայ ոք նաեւ բնական մարմնոյ մը անդամները անբնական դրից և ձեւոց պարտաւորել՝ պարաններու պնդութեամբ և վէրքերու զօրութեամբ :

Այդպէս է Հայութիւնն , եղբարք իմ , իւր պետական բաժանմանց ներքեւ . ոչ ամէն կողմ նոյն ազդեցութիւնը կը տիրէ , և ոչ ամէն Հայ նոյն ոճով կրնայ ազգասիրութիւն դաւանիլ և հայրենասիրութիւն գործադրել : Լսարանիս մէջ չեմ կարող քաղաքագիտական տեսութեանց մտնալ , և ոչ իսկ Կոստանդնուպոլսոյ , Բէթրսպուրկի և Թէհրանու դահլիճներուն դիւանագիտութիւնները զննել , կամ անոնց վրայ բազդատական խորհրդածութիւններ ընել : Ձեր Լսարանին դրութիւնը քաղաքագիտական նիւթերէ կը խորչի , և պէտք է իսկ որ խորչի . և ես ամենայն համոզողութեամբ կը յարգեմ այդ դրութիւնը , և կը կարծեմ խօսքս ի մասինս : Միայն բաւ է ինձ որ Հայութեան միութեան գաղափարին դիմաց , և Հայութեան միութեան ջանից նկատմամբ , ամենայն Հայ չմոռնայ թէ ինչ դժբաղդութիւնք յառաջ եկան և կու գան այդ բաժանման ալ պարագայէն . և երբ դարմանոց բացատրութեան կ'անցնիմք , ի նկատի առնուի այդ մասնաւորութիւնն ալ՝ իբր չարիք ի դարմանել և իբր հարկ ի յարգել :

Յառաջեմ տակաւ , եղբարք իմ , մեր բաժանմանց ցաւալի թուարկութեան մէջ . մեկնաբանեմ դեռ թէ բաժանեալ եմք ոչ միայն եկեղեցեաւ , ազգաւ , տեղեաւ և պետութեամբ , այլ և լեզուաւ և իշխանութեամբ : Այո՛ , լեզուաւ ալ բաժնուեցանք , ցորչափ Հայեր կան՝ որոց լեզուն հայերէն չէ և զանազան օտար լեզուներ իրենց մայրենի լեզու եղած են : Բաժնուեցանք և իշխանութեամբ , ցորչափ նոյն իսկ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ հովուապետական պաշտօն կը վարեն

կաթողիկոսունք առաւել քան զմի, որք իրենց մէջ հաստատուն յարաբերութեանց պայման մը չունին, և կը ներեն որ իրերաց ստորակարգեալք զիրեարս իբր հետտեալս և հակառակաթոռս նկատեն: Եւ ոչ այսչափ միայն, այլ և տեսութեանց իրական բաժանումներ ունիմք Հայքս, ոչ միայն մեր կացութեան նկատմամբ, այլ և մեր ապագային նկատմամբ, եւս առաւել մեր ապագային ձեւակերպութեան, և ձեւակերպութեան մը հասնելու միջոցաց նկատմամբ: Կը բաժանեն զմեզ նաեւ մեր լեզուին ոճերը, և մեր դաստիարակութեան հիմանց խնդիրները, և մեր հակամիտութեանց տարբերութիւնները. այնպէս որ նիւթականապէս նկատեալ բազմօք կը մեղանչէ Հայութիւնն միութեան դէմ, և չեմք կրնար ըսել թէ Հայութեան միութիւնը ամբողջապէս կայ և կը տիրէ:

Բայց ամենայն ինչ որ նիւթական թերութիւն կամ պակասութիւն է, իբր ի բազումս և գրեթէ միշտ նիւթական պատճառաց արդիւնք է. և ես հարկ չեմ զգար Հայութիւնն իբր յանցաւոր և պատասխանատու ամբաստանել: Յանցաւոր և պատասխանատու դատած կ'ըլլայի, եթէ բաժանմանց տեղ անմիաբանութիւններ յառաջ բերէի. վասն զի անմիաբանութիւնն բովանդակ տեսական և բարոյական է, և անոր պարտաւոր ըլլալ յանցանք է: Դուք գիտէք իմ կարծիքս այս նիւթին վրայ, վասն զի ձեր առջեւ ազատաբերան իմ միտքս յայտնեցի, և առաջի ատենի ընդհանուր կարծեաց փաստաբան կանգնեցայ արդարացնել Հայութիւնը կեդտալից ամբաստանութենէ մը, զոր օտարք և ազգայինք ոչ սակաւ համարձակ մեր ազգին երեսը կը զարնեն:

Ինչ որ այն առթի մէջ կրցայ փոքր ի շատէ յառաջ բերել, — և ուրախ եմ որ իմ խօսքերս և պաշտպանութիւններս կրցան իմաստնախոհ և ազգասէր անձանց

համակրութիւնը գրաւել, — ինչ որ կ'ըսեմ, այն առթիւն մէջ խօսեցայ, նոր հաստատութիւն մը կ'ընդունի այս աւուր ըսածներէս. վասն զի բազում ինչ՝ որ իբր անմիաբանութիւն կը կարծուի, ուրիշ բան չէ, եթէ ոչ բաժանում կամ բաժանմանց անտնօրինելի հետեւութիւն :

Բաժանում և անմիաբանութիւն հաւասարապէս միութեան դէմ կը մարտնչին, և երկոքումք ալ միութիւնը հաւասարապէս կ'եղծանի և կը խանգարուի : Հարեւանցի քննադատը, որ հետեւութեանց միայն մըտադիր է, կրնայ երկուքը ի մի շփոթել, և միութեան պակասութիւնները անխտրաբար միոյն կամ միւսոյն, կամ թէ աւելի դիւրաւ անմիաբանութեան գրել, և զՀայութիւնն անողոքելի կերպով մեղադրել : Այդ իրաւացի չէ, մանաւանդ թէ բանաւոր իսկ չէ : Արդարադատ քննիչը և իմաստնասէր խուզարկուն, աշուրնին վեր կը վերցնեն և պատճառը կը փնտռեն, և ըստ այնմ իրենց վճիռը կ'արձակեն : Բաժանումը և անմիաբանութիւնը իրարու շփոթել, սխալ է. ինչպէս սխալ է մարմինը հոգւոյն, հարկը աղատութեան, և բնականը բարոյականին հետ շփոթել :

Սխալ է և անօգուտ, սխալ է և վնասակար իսկ. վասն զի այդ շփոթութենէն է՝ որ այլ ընդ այլոյ ուղղութիւններ կը բռնեմք, և ընդունայն ճիգեր կը թափեմք, ո՛չ նպատակին կը հասնիմք, և ո՛չ արդիւնք մը կը պտղարբերեմք : Որք Հայութիւնը անմիաբանութեան մեղապարտ դատեցին, զայն անողոքելի կերպով դատափետեցին, յանդիմանեցին, կշտամբեցին, և մինչև իսկ կրցան անոր ըսել. թէ « արժանի որոց գործեցերն առնուս զհատուցումն » . այս է, թէ ըրած յանցանացդ և անմիաբանութեանդ արժանաւոր պատիժ են կրած վիշտերդ՝ զրկանքդ և հարստահարութիւններդ . անոր

համար ալ իրեն դէմ չատ մը կծու քարոզներ որոտացին , և փոխանակ իրեն վրայ խղճալու և իրեն օժանդակ ձեռք մը կարկառելու , թող տուին որ աստուածային ցասման արժանահաս պատուհաս ըսուած վիճակը անոր վրայ ծանրանայ :

Իսկ ընդհակառակն եթէ գիտնային , կամ աւելի ճշդիւ , եթէ ուզէին գիտնալ և իմանալ , թէ բաժանմանց տարաբաղդիկ արկածք զՀայութիւնն կը տանջեն , և թէ Հայուն միաբանասիրութեան և ազգասիրութեան արդիւնք է , ինչ որ է Հայութիւնն այսօր , և ինչ որ պիտի ըլլայ , յայսմհետէ . եթէ խստիւ կշտամբելու տեղ , գիտնային արդարապէս դատել , և արթուն իմաստութեամբ բաժանմանց դարմանները թելադրէին . և խեղճ Հայուն սիրտը կոտրելու տեղ անոր քաջալերիչ յոյսեր աւելցնէին , որք չէին իսկ պակսեր , ո՛չ ապաքէն ճշմարիտ ազգասիրի և խոհական իմաստասիրի գործ կատարած կ'ըլլային , և իրենց ջանից մխիթարական արդիւնքներով կը պիտուէին :

Իմ ներքին համոզողութիւնս , իմաստնագոյն ազգասիրաց օրինակը , և վերջին ժամանակաց մէջ ազգային բարւոյն աշխատողաց ընթացքը , զիս այս ուղղութեան կը կապեն , և ի սոյն կ'ուզեմ հաւատարիմ մնալ : Անոր համար ալ , Հայութեան միութեան վրայ խօսելով , ամենեւին չեմ ուզեր և ոչ բառ մը ծախել Հայերը ի միաբանութիւն յորդորելու : Բաւական իմ ազգս միաբանութեան արդիւնք ցուցուցած է , Հայութեան անունը չմոռնալով և հետքը չկորսնցնելով , երբ ամենայն ինչ ոչ թէ կը յորդորէր , այլ և կը բռնադատէր զինքը Հայութեան և Հայ Միութեան յիշատակն իսկ միտքէն խլել և անունը չրթանց վրայ չհնչեցնել :

Ես բաժանմանց տխուր պատկերը ինչչափ հնար է համառօտ , և ինչչափ կարող էի ճշգրիտ , ձեր աչաց առջեւ

նկարեցի, որով իրաւունք կ'ստանամ Հայութեան միութիւնը իբր բազմօք թերի և ֆլասեալ նկատել, և ձեզ՝ որ Հայութեան բարւոյն սիրովն կը տոչորիք, մատնանիչ ընելով այդ տխուր պատկերը ըսել. Ահա, եղբարք, ինչ մեզի կը պակսի, աղէ, եղբարք, այդ պակասները լեցնեմք. ահա, եղբարք, Հայութեան բաժանումները, աղէ, եղբարք, այդ բաժանումները միութեան օժութեամբ դարմանեմք:

Ժամ է ուրեմն, որ նախազեկոյց ազդարարութեանս համեմատ, բանախօսութեանս երկրորդ մասին անցնիմ. քանի մը վայրկեան հանգիստէ ետքը, որ թէ՛ ձեզ և թէ՛ ինձ ի դիւր պիտի լինի:

Հայութեան բաժանումները տեսանք. տեսանք եւս թէ՛ Հայութեան միութիւն ըսելով ուրիշ բան չկրնար իմացուիլ, բայց եթէ այդ բաժանումները բառնալ կամ դարմանել: Շատ կերպ բաժանումներ յիշեցինք, և կրնայինք իսկ դեռ ուրիշներ ալ յիշել, սակայն առանց ուրուք դիմադրութեան կրնամք անոնցմէ չորսը իբր գլխաւոր և հիմնական նկատել, զորս և աւելի ընդարձակ մեկնել հարկ դատեցի. և են բաժանմունք եկեղեցեալ, ազգաւ, տեղեալ և պետութեամբ: Եթէ ըսեմ թէ կարող եմք մեք Հայութեան մէջէն այդ չորս բաժանումները բառնալ, և միապաղաղ միութիւն մը կազմել, հարկաւ իբր ցնորեալ ոք կը դատուիմ խոհական ունկնդիրներէս, և իբր երազապատում՝ ո՛չ ընդունելութեան և ո՛չ իսկ ունկնդրութեան արժանանալ:

Եկեղեցեալ միութեան կը հակառակի անցնիւր խղճի ազատութեան օրէնքը:

Ազգաւ միութեան կը հակառակի Օսմանեան պետութեան ներքին կազմութեան օրէնքը :

Տեղեաւ միութեան կը հակառակի դարաւոր տեւողութեամբ հաստեալ դրից և շահուց օրէնքը :

Պետութեամբ միութեան կը հակառակի զինուորական և դիւանագիտական իրաւամբք հաստատեալ միջնազգային օրէնքը :

Ուրեմն Հայութեան իրական և ամենակատարեալ միութեան գործադրուելուն դէմ, այնպիսի օրէնքներ կը մարտնչին և այնպիսի հարկեր կը հակառակին, որոց դէմ ոգորիլ, ոչ թէ միայն քաղաքական արդարութեան և քաղաքագիտական պահանջմանց պարունակէն կ'ընդվզէ, այլ և մարդկօրէն խօսելով բարոյական և արդեան անհնարութիւն մը կը պարունակէ : Աւելի պարզ խօսելու համար, և իրողութիւնները իրենց սեպհական և սովորական բառերովը բացատրելու համար, պէտք է խոստովանիմք առանց ինքզինքնիս խաբելու, թէ Հայք և Հայութիւն բաժանեալ պիտի մընան եկեղեցեաւ, ազգաւ, տեղեաւ և պետութեամբ, որ է ըսել, թէ Հայք դաւանութեամբ, վերաբերութեամբ, բնակութեամբ և հպատակութեամբ միացեալ չպիտի կարենան ըլլալ, ցորչափ աշխարհս կը պահէ այն դիրքը՝ զոր հինգ վեց դարէ ի վեր ստացաւ, և յորում տակաւին կը մնայ : Այն ցանկալի և սխրալի վիճակը, զոր մտօք կրնամք երեւակայել, Հայութեան վերածընութիւն մի է . որուն համար թէպէտ և չուզենամք նիկողիմոսեան բացատրութեամբ ըսել. « Միթէ մարթնչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանել », բայց ոչ նուազ դժուարահաւատութեամբ կրնամք այդ վերածնութեան կարելիութեան վրայ երկբայել :

Քաղաքակրթեալ ժողովրդոց մէջ ազգութեան մի-

ութիւնը , քաղաքական միութեան սկզբան վրայ հաստատուած է . որով եթէ ուրիշ բաժանումներ ալ տիրեն ազգի մը մէջ , անոր միութիւնը աւրուած չըսուիր այնպիսի բաժանմանց պատրուակաւ , որք անհատական պարունակի մը մէջ փակուած կը մնան , և ազգերու միութիւնը ամենեւին չեն եղծաներ : Վերաբերութեան միութիւնը և հպատակութեան միութիւնը , այսինքն է , ազգաւ միութիւնը և պետութեամբ միութիւնը կը նոյնանան այս առթի մէջ , և նոյնանալով ազգու զօրութիւն մը կը կազմեն , որուն չեն կրնար իւրիք ստնանել ո՛չ դաւանութեան բաժանումը , ո՛չ բնակութեան բաժանումը , և ո՛չ ուրիշ ո՛ր և իցէ տեսակի բաժանում մը որ կայ կամ կարենայ գոյանալ : Մեք որ քաղաքակրթեալ աշխարհի հետոց վրայ կը քայլեմք , պէտք է որ նոյն ոճով և նոյն ճանքով յառաջէինք : Սակայն հարկ է ինձ ազգասիրական զոհողութեանց հոգին ի բռին առնուլ և ակամայ հանդարտասրտութեամբ ըսել , թէ այդ ճանբան ալ՝ դեռ մեզի համար չէ : Չըլլայ թէ ոք զիս յեղափոխութեանց յուզիչ մը կարծէ՝ ելբ Հայութեան միութիւնը կը քարոզեմ , և Հայութեան բաժանմանց դարմանները կը յանձնարարեմ . ես առաջին երեւակայական իրաց անհնարութիւնը կը դաւանիմ , և անհնարին իրաց ո՛չ փաստաբան կրնամ ըլլալ և ո՛չ պաշտպան :

Մեր միութիւնը այսօր մեզի և մեր վիճակին յարմարեալ իմաստով մը պիտի իմացուի , և անոր համեմատ ոճով մը պիտի պատրաստուի . ապա թէ ոչ մեր գործը՝ վիժած մը կ'ըլլայ , մեր աշխատանքը՝ փասակար , մեր կատարածը՝ կործանում : Յարգելով այն բաժանումները՝ զորս ժամանակը առանց մեր կամաց ստեղծեց և որք առանց մեր կամաց կը տեւեն , մեր կողմէն ամենեւին քաջալերութիւն չտամք անոնց պահպանութեան , և ոչ ալ ուղղակի ձեռնտուութիւն ընեմք

անոնց յառաջադիմութեան . թեթեւցնեմք և մեղմեմք ինչ որ արդէն գոյացեալ է , և մասնական առիթներէ օգուտ քաղելով միութիւնը և միաւորութիւնը զօրացնեմք . և այն ամենայն որ Հայաստանի տիրապետողաց կամքով որոշուած չէ և Հայոց ազատութեան թողեալ է , գէթ այն մասին մէջ բաժանմանց՝ թէ ոչ գոյութիւնը՝ գոնէ ոյժը ջնջելու աշխատիմք : Մաս մը տեղական , մաս մը ուսումնական , մաս մը վարչական , և մեծ մաս մըն ալ եկեղեցական , բաղադրեալ կեդրոն մը ձեւացնեմք Հայութեան համար , և այդ բաղադրեալ կեդրոնին ազդեցութիւնը , մեք Հայքս անհատաբար յարգեմք , այնպէս որ ամենայն ինչ՝ որ Հայ է , և ամենայն ոք՝ որ Հայ է , այդ կեդրոնին հետ յարաբերութիւն մը ունենայ : Այդ յարաբերութեան պաշտպան և պահպան ըլլամք , և ցորչափ բռնադատիչ կամ հարկեցուցիչ օրինական զօրութիւն մը չեմք կրնար ստեղծել , մեք իւրաքանչիւրքս մերովս ազատ կամօք այդ բաղադրեալ կեդրոնին զօրութիւնը և զօրականը ըլլամք , և նախնաբար մեր անձանց վրայ ազդեցութիւն բանեցնեմք , և յորդորակաւ և օրինակաւ մեր ընկերներն ալ խրախուսեմք ի նոյն :

Չեմ յանդգնիր պնդել թէ գաղափարներս ճիշդ են , և ոչ իսկ թէ ըստ ամենայնի պարզ են . որք նիւթոյս փափկութեան տեղեակ են , կ'արդարացնեն ի հարկէ բանախօսին երբեմն միմի և երբեմն կրճատ բացատրութիւնները : Բայց այս չարգելեր որ մեք կարող լինիմք մասնաւոր բաժանմանց կէտերը մի առ մի մեր առջեւը առնելով , անոնց իւրաքանչիւրին դարմանոց վրայ փոքր ի շատէ մեկնութիւններ տալ և եղանակները պարզաբանել , թերեւս , սիրելիք իմ , ձեր յուսացածին չափ ոչ տեղեկութեանց հոծ առատութիւն , և ոչ գործադիր հանճարոյ բեղմնաւոր արգասիքը պիտի գտնայք

յիս . բայց ոչ ապաքէն քաջալերութիւն տուիք ինձ , որ կրցածիս չափը ձեր առջեւը խօսիմ : Ես կրցածս կ'ընեմ , և կ'սպասեմ որ այլք քան զիս յաջողակք նոյն նիւթերը մեկնաբանեն և զիս ուղղեն և կատարեւագործեն :

Եթէ օրէն է ինձ առանց խղճի ազատութեան դէմ մեղանշելու , դաւանանքի տարաձայնութեանց և եկեղեցական իրաւասութեանց բաժիններուն դէմ ձայն բառնալ , և առանց աշակերտելու հետամուտ երեւնալու , եկեղեցական միաւորութեան յորդորանք կարդալ , եթէ զիս իբր կրօնամուլ չէք մեղադրեր , ես անկեղծաբար կ'ուզեմ յայտարարել , թէ Հայութեան մէջ մտած եկեղեցական բաժանմունք , ոչ Հայաստանի տէրերուն կամքէն յառաջ եկան , ոչ հայազգեաց ազատ կամօք ծագեցան , և ոչ ճշմարտախուզութեան նախանձախնդրութեամբ սկսան : Եւրոպական յարաբերութեանց մէջ օգուտ մը գտնալու բաղձանքը , և Եւրոպական հովանաւորութեանց ներքեւ առժամանակեայ հանդարտութիւն մը ստանալու ձգտումը , զոմանս լատին ազգաց և զայլս Անգղիական ազգաց դաւանութեանց աշակերտիլ յորդորեց , որպէս զի առաւել մօտաւորութիւնը՝ առաւել նպաստից և առաւել համակրութեան դուռ բանայ իրենց : Եւ որովհետեւ ամէն արարք՝ հակարարք մը կը շարժեն , յոմանս մօտենալու փոյթը , յայլս հեռացնելու ջանք մը գրգռեց , և ներհակընդդէմ բաբախմունք զազգն ի մասունս փեռեկեցին : Օտարք , որ աշակերտներ բազմացնելու համար առաջ ամէն զիջում՝ ամէն ընդարձակութիւն՝ և ազգային դրից անփոփոխութիւն կը խոստանային և կ'երաշխաւորէին , տակաւ առ տակաւ պայմանները շատցուցին , և արտաքին նպաստից գնով ներքին պայմանները փոփոխեցին , և դժուարութեանց յաղթեցին :

Այսօր Հայոց, իմանալով, որ Հայոց գործն է մտածել, թէ այն առիթները որ այդ բաժանումները ստեղծեցին՝ դադրեցան. թէ քաղաքակրթեանն Եւրոպէ՝ ոչ այլ եւս դաւանութեանց սակարկութեամբ իւր պաշտպանութիւնը կը վաճառէ. թէ Հայազգին համարձակ յարաբերութիւն ունի Եւրոպիոյ դահլիճներուն՝ կաճառներուն՝ համալսարաններուն և գիտնական և քաղաքագէտ անձանց հետ, առանց պարտաւորեալ ըլլալու նախ դաւանութեան պատճէն մը արտասանել. թէ այնչափ ներքին զօրութիւն և փարթամութիւն կ'զգայ ազգն իւր մէջ, որ պարտաւոր չէ քանի մը հազար ոսկւոյ գումարի համար օտարազգի իրաւասութեան մը ենթարկուիլ. թէ քրիստոնէական կրօնից էութիւնը չկախուի քանի մը բառագիտական խնդիրներէ. թէ Քրիստոս ոչ երբէք հակազգային դրութեան մը վրայ դրաւ իւր հաւատքը. և թէ հնաւանդ և նախնական եկեղեցին յարգեց իւրաքանչիւր ազգին՝ ազգային եկեղեցական վարչութեամբ կառավարուելուն սկզբունքը. և այս ու ասոնց նման տեսութեանց զօրութեամբ պէտք է ամէն Հայ ինքնայորդոր բերուի ի վերանորոգել Հայ Ազգին եկեղեցական միութիւնը. և ուր այլ զօրաւոր միաւորութիւն մը կը պակսի, այսու զօրացուցանել Հայութեան միութիւնը :

Խօսքս անոնց համար է, որոց ազատամտութեան և ազգասիրութեան զփորձ առեալ եմ, և որք առաջի աշխարհի և առաջի ընկերաց գործով և բանիւ այդպիսի սկզբունքներ ունենալնին յայտնած են : Որովհետև այդպիսեաց գոյութիւնը գիտեմ, և այդպիսեաց տաշանդը և կարողութիւնը կը յիշեմ, և ըղձից կը սիրանամ, անոր համար այդպիսեաց կ'ըսեմ ի մասնաւորի, թէ Հայութեան միութեան նպաստաւոր գործ մը կը կատարեն, եթէ գործադրեն միաւորութիւն մը, որ կը-

րօնափոխութիւն չէ, ինչպէս ըսաւ Նա՝ որ իշխանաբար կրնար խօսիլ, և ինչպէս կրկնեց ամէն Հայ իւր սրտին մէջ նոյն խօսից արձագանքը: Այդպիսեաց կ'ըսեմ, ոչ ես, այլ կ'ըսէ Նա՝ որ ամեննուս սիրելի է և պատկառելի. « Թող ընկերական և ազգային հոգին զօրանայ ի մեզ, և փոխանակ միմեանց հակառակ և անջատաբար գործելու, և մեր անհատական ոյժերն իրարու դէմ գործածելով սպառեցնելու, մեր զօրութիւններն (ամէն զօրութիւններն) ամփոփեմք ի մի, և ազգին միահաղոյն յառաջագիմութեան համար գործածեմք զանոնք: Քառասուն յիսուն տարուան տխուր փորձն ըզմեզ բաւական լուսաւորեց. տեսանք այժերնուս առջեւ որ մեզմէ աւելի ետ մնացած ազգեր, մեզմէ աւելի յառաջ գացին, և մեք շատ ետ մնացինք, քանզի իրարու դէմ մաքառեցանք, և զիրար կործանելու աշխատեցանք: Այո՛, ալ պէտք է գան և միանան մեզի հետ »: Այդ սրտաշարժ խօսքերը ես լսեցի մեր ազգասէր և ազգանուէր Պատրիարք Հօր բերնէն, և դուք ալ կարդացիք նոյն խօսքերը. այդ խօսքերէն ազգեալ կը խօսիմ. ասիկայ Հայութեան միութեան նպաստաւոր կէտ մի է, զոր անարգել հնար չէ, մանաւանդ թէ ազգասիրաց ուշադրութիւնը պէտք է գրաւէ:

Բայց եթէ կան անձինք՝ որոց մտաց համեմատ այդ բաժանումը առաւել գերագոյն և գերբնական կարգի շահ մը կը պարունակէ, չեմ դժուարիւր յարգել այնպիսեաց ալ խղճին ազատութիւնը. և թող տալ անոնց ունենալ այն դաւանութիւնը զոր կը վերադասեն խղճիւ, կամ թէ զոր պահել կը պարտաւորուին մասնաւոր պատճառի մը զօրութեամբ. բայց միթէ պէտք է որ այդ պարագային համար այնչափ իմն յառաջէ Հայութեան բաժանումը, որ պարտաւոր ըլլայ ոք ուրիշ մը բացարձակ տէր ընել իւր անձին և բաղդին եւս և

ազգային սկզբանց և ազգասէր զգածմանց ուրացութեամբ, և եկեղեցական և հոգեւորական պատրուակի մը ներքեւ, զանազան մասերու բաժնել Հայոց ազգը, և մի ազգութենէ, որ անբաժին է ի բնէ, բռնի զանազան ազգութիւններ կազմել:

Ոմանց թերեւս աւելորդ երեւին ողբերս, և գաղթակղի թերեւս ընդ իս, իբր թէ չափազանց առաւելութիւն մը տուած ըլլամ այն մասանց որք Հայութենէ բաժանեալ նոր ազգութիւններ ստեղծեցին, և որք ներքին գժտութեամբ պառակտեալ ստորաբաժանումներ կազմեցին: Չեմ անգիտանար թէ թուոյնկատմամբ մեծ ծանրակշռութիւն չեն կրնար ունենալ այդ բաժանումնք, որք միահամուռ առեալ և գումարեալ հազիւ թէ բոլոր Հայութեան մի քառասներորդ մասը կը կազմեն. սակայն թիւէն զատ ուրիշ պարագաներ ալ կան որք իրի կամ իրողութեան մը ծանրակշռութիւնը կը չափեն: Քաղաքական առմամբ մի մի բարոյական մարմիններ կը կացուցանեն, որովք թէպէտ անհաւասար ընդարձակութեամբ, բայց միշտ իրական բազմաւորութեամբ, Հայութիւնը այսօր երեք կամ չորս ազգ է, նոյն իսկ Օսմանեան կայսերութեան սահմանաց մէջ, և այս մարմնոց բաժանումը ինկատի կ'առնուի պաշտօնական յարաբերութեանց մէջ: Գործնական առմամբ Հայ ազգութեան կեդրոնը կը պառակտի, շատ մը կարող և ազդու ձեռաց և ազդու միջոցաց օժանդակութենէ կը զրկուի. վասն զի մասնական զօրութիւնք իրենց իրողութիւնը կ'ենթարկեն մասնաւոր կեդրոնի մը որ ինքնագլուխ կը գործէ և ի զուր վախճաններ և էակներ կը բազմացնէ: Տնտեսագիտական առմամբ այդ մասնաւոր կեդրոններ, որովհետև իրենք իրենց մնալով ներքին գոյութեան և կենաց հիմքը չունին, պարտաւորեալ են բոլոր ուժերնին գոյութեան և կենաց

բարիքը բռնի ապահովելու ծախել, և ոչ թէ յառաջադիմութեան գործածել. և դուրսէն հովանաւորութիւն և ձեռնտուութիւն ստանալու համար, իրենց ազգայնութեան բարւոյն մասերը հետզհետէ կը զոհեն ի գին այդ օժանդակութեանց : Այս պատճառներուն համար է, եղբարք, որ կարի իսկ զգածեալ եմ մեր ազգաբաժանմանց տեսարանին առջև, և այս պատճառներուն համար է, որ թերեւս չափազանց բայց ոչ վայրապար, ծանրակշռութիւն կու տամ անոնց հետեւանաց :

Հնար չէ արդեօք գոնէ, այնպէս իմն տրամադրել գործերը, որ ինչպէս էր ազգն ասկէ յիսուն տարի առաջ այնպէս վերագառնայ լինել և 'իներկայիս : Քաջաշաղթ Օսմանեան Աշխարհակալին կամքը՝ որ Հայ ազգութիւնը կերպաւորեց չորս դար առաջ, և իւր Օգոստոսափառ Յաջորդաց օրէնքը՝ որ զայն ամբացուցին իրենց իշխանութեամբ, մի և անբաժին Հայութիւն մը հիմնեցին և ոչ բազմերփեան : Մեր ներքին գժտութեանց արդիւնքն եղաւ, որ իրարու դէմ մաքառելով զատուեցանք. մեր ներքին միութեան արդիւնքն ըլլայ թող, որ իրարու մօտենալով նորէն միանամք : Մեր Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբանց երկրորդը, որ ամէն ազգայնոց պարտաւորութիւնները կը մեկնէ, և կ'օրինադրէ պայմանները որով ոք Հայ է, կրօնական դաւանութեանց՝ համոզողութեանց կամ ըմբռմանց ակնարկութիւն չընեն. հնար է ուրեմն որ ոք իւր մտաց համոզողութեան համեմատ կրօնք կամ հաւատք ունենայ, և հոգեւոր մխիթարութիւնները իւր ախորժակին կամ համոզողութեան համեմատ ընդունի, բայց Հայ ըլլայ միշտ, և միոյ Հայ կեդրոնին հպատակէ իւր անձը և իւր գործերը :

Որպէս զի այդ դրութիւնը ճշմարտի, և այս կերպ փափաք մը կատարուի, և բոլոր Հայերը ի մի ազգու-

Թիւն խմբուին , պէտք է նախ որ հաւանի պետութիւնը . այլ սա ոչ թէ իւր քաղաքական տեսութիւններէն դրդեալ զմեզ բաժնեց , այլ մեր թախանձանքներէն պարտաւորեալ զմեզ զատեց : Իրեն համար անտարբեր պիտի ըլլայ , որ մեք ուզեմք հրաժարիլ այն շնորհքէն , այն տարաբաղդիկ շնորհքէն , զոր ի մեր վնաս մեք իրմէ ընդունեցանք : Մեր Օգոստաբառ ինքնակալը , որ իւր հպատակաց բարւոյն համար ամէն ջանք կը խոստանայ , և իւր քրիստոնեայ հպատակաց վիճակին բարւոքման համար հայրական խնամք կը ցուցնէ , որ զոհողութիւններ իսկ յանձն կ'առնու որպէս զի մեր տառապեալ ազգին բարօրութիւնը պատրաստուի , չկրնար գժուարիլ տեսանելով թէ մեք մեր պատրաստականութեամբ իւր բարձր բաղձանաց արդիւնաւորութեան կը գործակցիմք և արգելքները կը բառնամք :

Պէտք է դարձեալ որ Հայոց Պատրիարքութեան մեծ կեդրոնը , որ անհամեմատ առաւելութեամբ թուոյ և տարածութեան արդէն յինքն կ'ամփոփէ զՀայութիւնն , ներողամիտ ըլլայ ի շնորհս նոցա , որ՝ որ և իցէ ներքին կամ արտաքին , հիմնական կամ պատահական , իրական կամ անձնական պատճառի մը համար հարկ կը սեպեն եկեղեցական կամ հոգեւորական տարբերութիւն մը պահել իրենց և Պատրիարքարանին մէջ :

Ես կը կարծեմ թէ մեր ազգային Պատրիարքարանը , որ հիմնական սկզբանց զօրութեամբ աններողամիտ դրութեան մը կապուած չէ . որ իւր եկեղեցական և կրօնական դրութեան զօրութեամբ ամենայն ներողամտութիւն ընդունած է . որ ազգիս և դարուս պահանջմանց քաջ տեղեակ՝ և իւր ժամանակաց բարձրութեան հանդիտակչիւ Գլուխ և Պատրիարք մը ունի . որ լուսամիտ և քաղաքագէտ և ազգասէր անդամովք զարգարեալ Օրէնսդիր և Վարչական և Գործադիր ժողով-

ներէ կը կառավարուի . որ իւր ազգին ճշմարիտ օգուտը առերեւոյթ բարիքներէն ճշդութեամբ որոշող ժողովուրդ մը ունի . մեր ազգային Պատրիարքարանը կ'ըսեմ, եթէ կամի՝ կրնայ ներել որ իւր ծոցին մէջ պարունակուին քանի մը մանր խումբեր , որք միայն եկեղեցական և հոգեւորական շրջանին մէջ իրենց մասնաւորութիւններ ունենալու բաղձացող կամ պարտաւորեալ են : Այս կերպով աւելի կը շահի կարծեմ Հայութեան մեծ կեդրոնը , քան թէ աններողամիտ դրութեամբ տարաձայնողները իրմէ հեռացնելով : Այն խումբերը որք Հայութեան մէջ տարաձայնութիւններ հանեցին , աւելի մեծցան՝ ընդարձակեցան և զօրացան , երբ բողոքովին անջատուելով անկախ մարմիններ և նոր ազգեր ձեւացան , քան թէ երբ մեծ կեդրոնին հետ միացեալ և անոր ենթարկեալ կը մնային :

Բայց երրորդ պայման մըն ալ կայ . պէտք է եւս որ այն մասնաւոր խումբերու եկեղեցական պաշտօնեայները , և մասնաւանդ անոնց վրայ հոգեւորապէս տիրապետող իշխանութիւնները , որք արտաքոյ են Հայութեան , հաճին չհակառակիլ ազգային միութեան զգածմանց , և մտացածին և կեղակարծ հոգեւորական սկզբամբք և կամածին հետեւութեամբք չուզեն եղծանել դրութիւն մը , որ ըստ ամենայնի օրինաւոր և շահաւոր է . ի բաց առեալ թերեւս յիշեալ հոգեւոր պաշտօնէից և հոգեւոր իշխանաւորաց անձնական և աշխարհային օգուտը :

Հոս կրնայի շատ բացատրութիւններ տալ այս մասին նկատմամբ , շատ պարագաներ մեկնել , շատ խնդիրներ պարզաբանել , և դուք ալ գիտէք թէ խընդրոյն մինչեւ ներքին խորերն թափանցելու չափ տեղեկութիւններ ունիմ : Սակայն ես հոս եկած չեմ , որպէս զի վիրաւորեմ զոք , կամ զկծեցուցանեմ զոք . այլ մի-

այն իմ ազգիս միութեան խնդրովը կ'զբաղիմ, և ներքին եռանդէս վառեալ անպատրուակ ամէն կէտերը մէջ տեղ կը բերեմ: Նոյն եռանդիս զեղմամբը, եղբարք, անպատրուակ պիտի յայտարարեմ թէ յոյս շատ քիչ է որ այն հոգեւոր պաշտօնեայք և իշխանաւորք, հայազգիք և օտարազգիք, որք անգամ մը նոյն իսկ Հայերը իրենց ազգին դէմ գրգռելով՝ բաժանումներ պատճառեցին, և այդ բաժանմանց քաղաքական հաստատութիւններ ընդունեցան, և այդ հաստատութիւններէ օգտեցան, և օգուտներէն շահեցան, և շահերովն ի՛նչ և ո՛ր հաւասարապէս վերոյիշեալ մանր խումբերուն վրայ կ'իշխեն, կարող ըլլան այնպէս իմն վառուիլ Հայութեան միութեան սիրովը, որ շահ և օգուտ մէկդի թողլով, մեր ընդհանուր ազգութեան բարեոյն համար զոհողութիւններ յանձն առնուն: Ո՛ւր էր թէ ես սխալէի, և նոքա իրենց արդեամբ և գործով իմ տխուր նախատեսութիւնս ստէին. իրաւ որ իմ մեծ երջանկութեանս օրը պիտի համարիմ այն օրը՝ որ այդ կատարուի: Բայց պիտի կատարուի՞ արդեօք:

Կ'ուզէի հոգեւորական պաշտօնեայները ի բաց թողլով ուղղակի ազգայնոց խօսքս ուղղել, և նոցա ազգասիրութենէն այս միութեան գործադրութիւնը խնդրել. բայց ի՛նչպէս հնար է հոգեւորական կէտի մը վրայ որոշողութիւն սալ, և հոգեւորական պաշտօնէից ազգեցութենէն դուրս ելլալ: Ի՛նչպէս հնար է չիշխել թէ քանի՛ քանի՛ ազգասէր անձինք այդ գաղափարը յղացան և գործադրութեան համար փորձեր փորձեցին, բայց միշտ իրենց փորձերը ապարդիւն մնացին, վասն զի հոգեւորական պաշտօնեայք ուղղակի կամ անուղղակի անոնց դիմադրեցին: Կ'ուզեմ միայն պարագայ մը եւս յիշեցնել ձեզ՝ ի սէր ճշմարտախօսութեան: Եթէ Հա-

յութեան մասնաւոր խումբերուն մէջէն ջերմ Հռովմէական մասին հոգեւորական դասը կարի իսկ եռանդեամբ հակազգային հոգւոյն կը հետեւի, ոչ նոյնպէս է Բողոքական մասին հոգեւորական և ազգապետական պաշտօնէից դասը, ոչ նոյնպէս կը յուսամ թէ ըլլայ Հռովմէական մասին մէջ ազգային իրաւանց պաշտպանութեան համար մրցող խումբին հոգեւորական պաշտօնէից մեծամասնութիւնը: Բայց ասոնց մէջ ալ դարձեալ ինչ ինչ դժուարութիւնք կը նշմարուին, և երբ գործադրութեան ձեռք զարնելու կը մտաբերէ ոք, դժուարութիւնք չեն պակսիր. անանկ որ այն միութիւնը զոր ցարգ բացատրեցի, այս է, Հայոց Պատրիարքարանի վարչութեան ներքև ազգային միաւորութիւնը, դեռ իբր գործնականապէս անհնարին կը նկատուի, և ազգասէրք պարտք կ'զգան ինքնայորդոր բերուիլ ի վերանորոգել Հայ ազգին եկեղեցական միութիւնը, և ուր այլ զօրաւոր միաւորութիւն կը պակսի՝ այսու զօրացուցանել Հայութեան միութիւնը:

Կան ազգասէր և քաղաքագէտ և իմաստասէր անձինք, որք՝ երբ մեր ազգային միութեան վրայ խօսք ըլլայ, այսինքն Հայութեան միութեան վրայ՝ որոյ վրայ մեք ալ կը խօսիմք, և երբ ոմանք ուղղակի կամ անուղղակի եկեղեցական՝ իրաւասական կամ կրօնական միաւորութեան պայմանները թելադրեն, իբր թէ քաղաքակրթութեան ամպերէն պատգամ մը որոտալով կը պատասխանեն. — Սխալ է Հայութեան միութիւնը հոգեւորական պարագաներու կապել, և ազգայնութիւնը կրօնականութեան հետ շփոթել, և ազգային իշխանութիւնը եկեղեցական իրաւասութեան հետ խառնել. երբէք Հայութիւնը մի չկրնար ըլլալ, եթէ կրօնական և իրաւասական բաժանմանց ականջ կը կախէ. մեք Հայութիւնը մի ազգ կ'ուզեմք, և ոչ մի եկեղեցի:

Այդ պիտեաց կարծիքը ոչ կրնամ անարգել, և ոչ իսկ պախարակել: օրէն է. քաղաքակրթեալ ազգաց օրինակները անոնց կը նպաստեն, և լուսաւորութեան սկզբունքն զիրենք կ'արդարացնեն: Բայց պէտք է որ՝ կամ խօսքը բացարձակ ենթադրութեան մէջ ընեմք, կամ թէ Հայութեան համար ալ ճշմարտուի այն քաղաքական դրութիւնը, որ Եւրոպական ազգայնութեանց սեպհական է: Եթէ յիշեալ ազգասիրաց խօսքը բացարձակ ենթադրութեան մէջ նկատեմք, օգտակար կերպով չեմք կրնար հետեւութիւններ քաղել. վասն զի ինչպէս քանի մը անգամ յիշեցուցի, վերացական խնդրոց ատենը անցաւ և բացարձակ միջոցաց անօգուտ ըլլալն ալ տեսնուեցաւ: Այսօր մեզի համար գործադրական խընդիրներ, յարաբերական միջոցներ, յարմար ճանքաներ պէտք են, և ոչ թէ անհակառակելի ճշմարտութեանց վրայ ընդ օդս վիճաբանութիւններ: Շատ աղէկ և շատ ճշմարիտ կրնայ ըլլալ սկզբունք մը, բայց մեզի համար գործադրելի չըլլալովն, բոլոր իւր գեղեցիկ յատկութիւնները մեզի համար անանկ են՝ իբր թէ չըլլային:

Իսկ քաղաքակրթեալ Եւրոպական ազգաց վիճակը. թերեւս երկինք շնորհեն և մերոյ հիքացեալ ազգի. բայց թէ ունի արդեամբ կամ ոչ, կարծեմ թէ ամենքնիդ ալ զայդ լաւ գիտէք: Ուստի եթէ կան ոմանք որք կարելի կը դատեն ազգութեան համար կեդրոն մը ցուցնել աստ և այժմ՝ սոյն կեդրոնէն ուրիշ որ չորս հինգ դարէ ի վեր կայ և կը մնայ, ես մտադիւր յետս կ'առնում Հայոց Պատրիարքարանի շուրջը բոլորեւլո յորդորակներս. սակայն կ'երկրորդեմ թէ իրական, գոյացական, տեսանելի, գործունեայ, և յարմար կեդրոն մը կը փնտռեմ, և ոչ տեսական, իմացական, երեւակայական, անգործ և անյարմար կեդրոն մը, որ միայն

ովանց մտաց, և այլոց բաղձանաց մէջ ունի իւր գոյութեան մտացածին և ըղձական հիմերը:

« Փորձն ալ մեզի ցուցուց այդ ճշմարտութիւնը, թէ ով որ անկեղծաբար ազգասիրութեան հետեւող է և ազգօգուտ գործոց հետամուտ, պէտք է որ ազգային կեդրոնին հետ միացեալ և անոր ենթարկեալ ըլլայ ըստ ամենայնի. ազգային կեդրոնէն գուրա ազգասիրութիւն մը, ազգասիրութեան կերպարանն է, և արդիւնաւոր չէ »: Այդ խօսքերը որ ուրիշ աւթի մէջ պատիւ ունեցայ հրապարակաւ արտասանել, մինչեւ հիմայ տուած բացատրութիւններէս նոր հաստատութիւն մըն ալ կ'ստանան, և ես աւելի համարձակութեամբ նոյն խօսքերը կը կրկնեմ, և Հայութեան միութեան համար, գլխաւորաբար ազգաւ բաժանումներնու բարձումը կը խնդրեմ, և բոլոր Հայազգեաց դարձնելով խօսքս, միւսանգամ կը կոչեմ սրտառուչ թախանձանօք. Աղէ, Հայեր, մի բաժնուիք ազգաւ յանուն Քրիստոսի, այլ պատուեցէք զՔրիստոս ձեր միութեամբ, թէպէտ և տարբեր կարենան ըլլալ և մնալ ձեր կարծիք և ձեր տեսութիւնք ի վերայ իրաց. « զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ » քննել և զննել և իբր զգործս բնութեան մտօք սահմանել:

Երբոր Հայութեան միութիւնը այդ կատարելութիւնը ստանայ մեծ քայլ առած պիտի ըլլայ, և հիմնական քայլ մը, սակայն դեռ ուրիշ գլխաւոր բաժանումներ ալ կան զորս դարմանել հարկ է և պարտք: Չորս գլխաւոր բաժանումներէն եկեղեցեաւ և ազգաւ բաժանմանց վրայ խօսեցանք. սակայն դեռ տեղեաւ և պետութեամբ բաժանմունք ալ կան, որք հաւասարապէս մեր մտադրութեան արժանի են: Ճիշդ ազգահամարի մը պէտք ունէի, որ տեղեաւ բաժանման նկատ-

մամբ գրական տեղեկութիւններ տայի, և անոնց համեմատ միջոցներ ալ առաջարկէի. նմանապէս աշխարհագրական տեղեկութեանց ալ պէտք է գիտել, որ ճիշդ հիմերու վրայ հաստատուին մեր տեղեւաւ բաժանման սահմանները :

Ըստ իմ տեսութեան պէտք չէ բնաւ որ մեր տեղը անձուկ սահմաններու մէջ փակեմք և Մեծ Հայոց հընգետասան գաւառօք սահմանեմք Հայաբնակ երկիրները : Արգէն ֆոքր Հայք երեսուն և եօթն դարէ ի վեր Հայաստանի ամբողջական մաս եղած է, և Պոնտոս, և Կիլիկիա, և Միջագետք, և Ատրպատական, և Աղուանք, և Վիրք, երկարաժամանակեայ իշխանութեամբ Հայութեան ընտելացած և Հայութեամբ բազմամարդացած են, և ցարդ իսկ իբր բնիկ տարր՝ Հայէն աւելի նշանաւոր և հաստատուն բնակութեամբ արդարացեալ տարր մը չեն ներկայացներ. մանաւանդ որ հարկ չէ մեզ անդիմամարտ ընդունիլ թէ այժմ հոն բնակող թուրքք և ֆուրդք սերնդեամբ և արեամբ օտարազգիք են Հայութեան, և ոչ յաւէտ իրենց հաւատքովը և թափառականութեամբը օտարացեալ տարերք, զորս կրթութիւնը և բնակութիւնը և յառաջագիմութիւնը կրնան շնորհել վերստին իրենց սկզբնական ազգութեան. թող օտարազգիք և օտար պաշտօնատունք այլ ընդ այլոյ անուններ տան մեր երկիրներուն, և այլ ընդ այլոյ կարծիքներ յայտնեն անոնց կազմակերպութեան և բնակութեան մասին. առերեւոյթ պարագայներէ յառաջ եկած սխալ կարծիքներ են, կամ թէ կամաւոր չփութութեանց արդիւնք են, որք իրական ճշմարտութեան դէմ չեն կրնար դնել, և գործերէն կը ստին. միայն թէ մեք իսկ կարենամք իմաստնարար գործել :

Չորս միլիոն կը հաշուիմք այսօր Հայքս. և այս թիւը՝ ալ հակառակութիւն չկրեր նաեւ ամենէն մոլի

հակահայերէն : Այս չորս միլիոնէն ստոյգ երկու և կէսը կը գտնուի այն պարունակին մէջ զոր յառաջագոյն գծեցի , և թերեւս ալ գրեթէ երեքը , եթէ իբր մտաւոր , որով և ոչ բազմօք հեռացեալ և օտարացեալ , ընդունիմք սահմանադրուող վրայ բնակողները . որով շատ կը նուազի իմ ըմբռնմանս մէջ մեր տեղեալ բաժանմանց չարագուշակ արգասիքը : Բայց և այնպէս մեծ դժբաղդութիւններ կը հետեւին այդ բաժանումէն զորս դարմանել հարկ է , և ստիպողական հարկ :

Հայաստանի Հայերուն սակաւթիւ երեւնալուն պատճառը քիչ ազդեցութիւն ունենալնին է նաև իրենց երկրին մէջ . որովհետեւ կը պակսի իրենց չափաւոր ուսում մը՝ որով ճանչնան թէ ինչ են , և ինչ վախճանի պիտի ծառայեն : Կը պակսի իրենց չափաւոր աշխոյժ մը որով ճանչնան թէ վատութիւն է անօրէն՝ յուզկահարին և ամբարիշտ հրոսակին գերի ըլլալ . և մինչ պետական հովանաւորութենէ և արտաքին պաշտպանութիւններէ կ'սպասեն երջանիկ հանգստութիւն մը , գիտնան եւս զայն պաշտպանել իրենց բազկին զօրութեամբ և իրենց վրիժուն երկիւղիւ : Կը պակսի իրենց չափաւոր միջոց մը որով կարենան հանգիստ կերպով իրենց ընտանեկան յարկին մէջ մնալ , գերգաստաննին խնամել , ցեղերնին աճեցնել , զաւակնին կրթել , յաջորդութիւննին տեղաւորել , և ոչ թէ անօք և անօգնական լքանել մանկահասակ հարսեր , տհաս զաւակներ , և անկար ծերունիներ , և պանդխտութեամբ օտար քաղաքներ յաճախել , և հոն գրաստաբար տալ զթիկունս իւրեանց ի հաւմետ . որպէս զի դոյզն ինչ գումար հաւաքեն , և զայն յետոյ բաժնեն կաշառակուրծ հարկապահանջին և յափշտակող յուզկահարին մէջ : Մեր Օգոստափառ Կայսրը որ ամեն գաւառաց անմիջական երջանկութիւնը կ'ուզէ և բոլոր իւր հպատակները անխտրաբար ի գործակցու-

Թիւն կը հրաւիրէ, կ'սպանէ նաեւ Հայերէն որ իրենց գործունեայ ձեռնառութեամբ գաւառաց խաղաղութեան և բարեկարգութեան նպաստեն, և ոչ թէ ձեռն զգօտուով ամէն բան ի պետութենէ սպասեն, և անհոգաբար գաւառները թողուն և փախչին: Յաւալի տեսարան մըն է, եղբարք, տեսանել նոյն իսկ մայրաքաղաքիս մէջ երկու երեք բիւր առոյգանձն Հայեր, որք մէկ մէկ գործունեայ անձինք կրնան ըլլալ, իսկ այժմ մաքսատանց և գործարանաց և կրպակաց մէջ կը հիւժին հեռի իրենց հայրենի հողէն: Իցէ՛ թէ այդ չարիքը օրէ օր քիչնալու վրայ ըլլար. մինչ լսեցի թէ վերջին օրերուս մէջ շոգենաւ մը երկու հարիւր և շոգենաւ մըն ալ հինգ հարիւր պանդուխտ բերին Հայաստանէն. հարկաւ միւս շոգենաւներն ալ բողբոլին պարապ չէին այդ տարաբաղդ ճանբորդներէն, որով երեսուն քառասուն օրուան մէջ հազար մըն ալ աւելցած պիտի ըսուին հոս մեր նժդեհակից եզրայրները:

Պէտք է ուրեմն հոգ տանիլ, և հոգ տանիլ ամենայն փութով և ամենայն խնամով, որ պանդխտութիւնը թէ չդադարիր, գոնէ նուազի, և մեր Հայաստանի եղբարք համոզուին թէ Կոստանդնուպոլիս գալով գանձեր չեն գտնար, այլ գանձեր կը կորսնցնեն՝ թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական, զորս իրենց բնիկ քաղաքին և գիւղին մէջ քիչ մը աշխատութեամբ և քիչ մըն ալ արիութեամբ ձեռք կրնան ձգել: Եւ որպէս զի այդ համոզողութիւնը իրենց մտաց մէջ հաստատուի, պէտք է գոնէ նախակրթական ուսում մը տալ Հայաստանի բնակչաց, որ իրենց միտքը լուսաւորէ, և զիրենք իրաց ընդհանուր գնացից՝ հրատարակութեանց՝ եղբուրեանց և խորհրդոց հետ յարաբերութեան մէջ դնէ, իրենց անձնական և ազգայնական պատիւը իրենց յայտնէ: Վասն զի եթէ Հայաստանի հանդարտութիւնը և

հարստահարութեանց բարձումը Հայաստանցիները պիտի ապահովէ և զիրենք գաղթելէ և պանդխտութեամբ շրջելէ պիտի խորշեցնէ, գիտնամք եւս թէ Հայաստան հանդարտութիւն չպիտի գտնէ, և հարստահարութիւնք չպիտի դադրին առանց Հայաստանի բնիկ բնակիչներուն ձեռնտուութեան, և առանց անոնց գործունեայ և արիական մասնակցութեան :

Հոս պէտք է որ ես իմ Ազգիս հետ խնդակցիմ և գովեստից դրուատեօք յիշատակեմ այն ընկերութիւնները, որք Հայաստանի մէջ ուսում ծաւալելու նպատակաւ մայրաքաղաքիս մէջ հիմնուեցան, և երեք տարուընէ ի վեր ամենայն ժրաջանութեամբ կը գործեն. և են Արարատեանը, Դպրոցասիրաց Արեւելեանը և Կիլիկեանը, յորս համախմբեալ են շատ ազգասէր սիրտեր, և որոց հսկողութեանը և գործադրութեանը կ'աշխատին ամեննուս սիրելի և ամեննուս յարգելի պատուարժան ազգայիններ: Կարծեմ թէ ցարդ քսան և չորս վարժարանք բացուած են ընդ ամէնն ի վասպուրական, ի Տարօն, ի Տաւրոս, և ի Կիլիկիա. և ոյք գիտեն թէ ինչպիսի քրտամբ և ինչ հսկողութեամբ կրցան ժողովուիլ այդ վարժարանաց հիմնարկութեան և պահպանութեան պէտք եղող գումարները, կրնան խնդակցիլ արդիւնաւորեալ գործոց վրայ. բայց ոյք կրնատեն Հայաստանի ընդարձակութեան և Հայութեան վերակենդանութեան համար պէտք եղող վարժարանաց թիւը, կը պարտաւորին խոստովանիլ թէ հազիւ մեր կարօտութեան հարիւրէն մին դարմանուած է ցարդ, յիշեալ երից ազգօգուտ ընկերութեանց վարժարաններովը :

Որպէս զի այս բարեքը ընդարձակի, պէտք է որ ընկերաց թիւը շատնայ և նուիրաց չափը առատանայ. ամէն հայազգի ընկերութեան մէջ մտնելու հարկը ըզ-

գայ, և իւր նուէրը իւր կարողութեան և ունեւորու-
խեան հետ ի յարաբերութեան դնելու զգացումը ունե-
նայ: Հայաստանի մէջ ալ ամէն բնիկ պէտք է նոյն օ-
րէնքին տակ մտնայ, վասն զի ինքն ուղղակի և անընդ-
միջապէս պիտի զգայ այդ բարւոյն բարեբաղդ հետե-
ւանքը: Արդէն մասնաւոր ընկերութիւններ ալ Հայաս-
տանի և հայաբնակ գաւառաց գլխաւոր տեղեաց մէջ
կը հաստատուին, և իւրաքանչիւր քաղաք և գիւղ՝ իւր
վարժարանը եթէ չկայ՝ հիմնելու, իսկ եթէ կայ՝ բարե-
կարգելու պէտքը կ'իմանայ և կը շարժուի: Սակայն
շարժումը չկրնար մեծնալ և ընդարձակիլ եթէ զօրա-
ւոր կեդրոնէ մը ոյժ չառնուր. այդ ոյժն ալ անպա-
տեհ և անճահ է ազգային Պատրիարքարանէն սպասել,
որ ուրիշ շատ զբաղմունքներ ունի, և պէտք չկայ որ
ազգայնոց ազատութեան սահմանին մէջ եղած գործե-
րուն իշխանաբար միջամտէ: Այդ զօրաւոր կեդրոնը
երկից ընկերութեանց միութիւնը և միացուցումը պիտի
արտադրէ. վասն զի երբ զօրաւոր կեդրոն մը կը ձե-
ւանայ՝ աւելի դիւրին է զօրաւոր և կարող անձանց
գործունէութիւնը պտղաբերել տալ, աւելի դիւրին է
հասարակաց վստահութիւնը գրաւել, աւելի դիւրին է
մասնաւոր ընկերութեանց ընթացից վրայ ապահովուիլ,
աւելի դիւրին է ամէն անհատները գործակցութեան
և մասնակցութեան պարտաւորել, աւելի դիւրին է
զգածմանց միակերպութեամբ ազգային հոգւոյն նը-
պաստամատոյց գործեր արտադրել, աւելի դիւրին է
գաւառներու մէջ հաստատուած ընկերութեանց ալ
միութեան ճանքայ բանալ: Այդ միութիւնը պէտք
չէ որ մասնաւոր և տեղական ընկերութեանց գոյու-
թիւնը ջնջէ, և կամ իրենցմէ որ և իցէ գործունէու-
թեան ասպարէզը կապտէ. այս առթիւն մէջ Հայութեան
արտակեդրոնական հոգին կ'ապստամբի որ և իցէ փոր-

ձոյ դէմ, և ճանաւոր շահերն ալ կը կորսնցնեմք: Այլ ընդհակառակն մեր ազգային հոգւոյն համեմատ, երբ զօրաւոր կեդրոնը կը հաստատուի, պէտք է ձեւ մը գտնալ գաւառական ընկերութիւնները հաւասարապէս գոհունակ ընելու. և ուրախութեամբ կը լսեմ թէ զօրաւոր կեդրոնը արդէն կը պատրաստուի, և Արարատեան, Գպրոցասիրաց Արեւելեան և Կիլիկեան ընկերութեանց գործադիր ժողովներն արդէն միաւորութեան համար կ'աշխատին, և իրենց ազգասէր փոյթն ալ յաջող կատարածով պսակուելու մօտ է:

Երբ կարող լինիմք այդ միութիւնը կազմել, և ամէն Հայ հաւասարապէս՝ Հայաստանը բարեկարգելու և Հայաստանցիները կրթելու, Հայաստանը զարգացնելու և Հայաստանցիները երջանիկ ընելու բաղձանքով վառուի, մեք՝ որ հին ժամանակաց պանդուխտներ ըլլալով, ինքզինքնիս Հայաստանէ դուրս երկիրներու բնիկ կը կարծեմք, կ'սկսիմք ի հարկէ գործնական համոզում մը ստանալ թէ պարտաւորեալ եմք տեղական միութեան դիմել. և եթէ ոչ անձամբ աստ և այժմ տեղափոխուիլ, գոնէ այժմէն համոզուիլ թէ մեր գործոց նպատակը և մեր աշխատանաց արդիւնքը սոսկ Հայաստանը պիտի զարդարէ, և Հայաստանի բարօրութեան պիտի նկրտի: Յայնժամ մեք եւս, մեզի անարժան չեմք սեպեր Հայաստանի բնակութիւնը, մեզի անյարմար չեմք դատեր Հայաստանի աշխատանքը, մեզի անպիտան չեմք համարիլ Հայաստանի մէջ վաճառաշահութիւն և արուեստ ծաղկեցնելու փոյթը, մեզի անօգուտ չեմք կարծեր Հայաստանի մէջ հողատէր և կալուածատէր ըլլալը. և տակաւ առ տակաւ կը կորսնցնեմք այն յետսամիտ անձնահաճութիւնը՝ որով տեղեաւ միութենէ կը խորշիմք այժմ: Ապահովութեանց նուազութեան պատճառաւ տեղեաւ միութեան չփու-

Թաշնուս ցաւակից և արգահատիչ կրնամ բլլալ . իսկ ուրիշ ո՛ր և իցէ պատճառաւ գաղթականութեանց մէջ խորարմատ հաստատուելու փութաշնուս՝ չեմ կրնար համաձայնիլ :

Այս սկզբան համեմատ կ'ուզէի որ մեծագործ պատրաստութիւնք և մեծածախ միջոցք՝ որք Հայը Հայաստանէ կամ Հայաբնակ երկիրներէ դուրս հաստատելու կը ծառայեն , խոհականութեամբ արգելուէին և փոյթ տարուէր այն ամէնը փոխադրել Հայաստանի մէջ , որպէս զի տեղեալ բաժանման վնասներուն առջեւը առնելու գարմաններ հնարուին : Բնական է որ խօսքերս չեն կրնար ընդարձակուիլ երբէք այն միջոցաց և այն ձեռնարկութեանց՝ որ Հայաստանէ դուրս գտնուող Հայոց կրթութեան և յառաջողիմութեան , և օտար երկրի մէջ Հայոց պատուով ներկայացուելուն պիտի ծառայեն . միայն կը յանձնարարեմ առաջնորդաց և վարչութեանց , ժողովոց և խորհրդոց , ընկերութեանց և անհատից , որ արթուն և խոհեմ նախատեսութեամբ մը կշռեն նպատակը և միջոցը , և միջոցները չըռայլեն . վասն զի այն աւելորդն ալ ընդ միոյ վախսուն և ընդ միոյ հարիւր պտղաբերութեամբ , և առաւելագոյն իրաւամբ կրնայ Հայաստանի պարունակին մէջ գործածուիլ :

Չեմ յորդորեր այժմ՝ կարաւաններ կազմելով Հայաստան վերագառնալ . բայց կը յուսամ յՈստուած , — որ յամենայն չարեաց փրկեաց զմեզ և փրկեսցէ — Թէ այն օրն ալ ինձի և ձեզի պիտի ցուցնէ : Այժմէն գոնէ սրտի նախապատրաստութիւնը և հեռաւոր տրամադրութիւնը սկսիմք ունենալ :

Մասնաւոր խօսք մը կ'ուզեմ ուղղել այն Հայոց՝ որք հեռաւոր աշխարհաց մէջ ցրուեալ են , և ուր հազիւ Թէ իրենց Հայութեան տկար և անզօր նշանները պահած են : Իրենց առաջին փոյթը պիտի ըլլայ Հայու .

Թիւննին արժարժել, և արժարժելու զօրաւոր միջոցներ են լեզուի միութիւնը և եկեղեցւոյ միութիւնը: Եւ որովհետեւ ընդհանրապէս այսպիսիներ բարեկեցիկ վիճակ մը ունին և դրամական միջոցներու առատութիւն, պարտք եւք ունին ի մասնաւորի, իրենց ունեւորութեամբ իրենց հայրենասիրութիւնը լցուցանել, և անցնիւր կարողութեան համեմատ նուէրներ առատաձեռնել Հայաստանի բարօրութեան և Հայաստանցիներուն դաստիարակութեան:

Մեր յիշեալ բաժանման ծանրացուցիչ պարագաներէն մին պետութեամբ բաժանու մնիս է: Հայաստան պետութեամբ երկից ինքնակալութեանց մէջ բաժնուած է, այսինքն է Օսմանեանին, Ռուսականին և Պարսկականին. իսկ Հայաստանէ դուրս Հայեր կը գտնուին եւք Աւստրիական, Ռումենական և Հնդկանդիական պետութեանց ներքեւ: Եթէ և բոլոր Հայերն ի Հայաստան կեդրոնանային և տեղեւ միութիւնը արտադրուէր, տակաւին Հայքս պետութեամբ բաժանեալ պիտի մնայինք: Ես ոչ կ'ուզեմ, որ Հայերը միոյն քան զմիւսն գերազանցութիւն տալով շփոթ մը յարուցանեն, և ոչ իսկ իրենց տիրապետողները նշկահելու թեկն ածեն. այլ միայն որ և իցէ պետութեան ներքեւ գտնուած ատեննին իրենց Հայութեան պահպանութեան և յառաջադիմութեան և ազգային յարաբերութեանց ուշ դնեն. որպէս զի իրենց ազգութեան միութիւնը չխափանուի: Յայդմ բարեբաղդ եմք Հայքս. վասն զի երբք ինքնակալութիւնք ալ կը ներեն մեզ մեր Հայութեան պահպանութեան և յառաջադիմութեան աշխատիլ, և բնկերութիւններով և վարժարաններով, եկեղեցիներով և առաջնորդարաններով մեր Հայութիւնը անշարժ պահել և տակաւ առ տակաւ բարգաւաճել: Պատրիարքական և Տաճկաբնակ Հայոց ազգապետական

իշխանութիւնը, որով պատուուեցաւ ազգն յՊամանեան ինքնակալաց անդստին ի տուուչութենէ Բաջայազթն Մէհէմէտի առ Յովակիմ եպիսկոպոս. — կաթողիկոսական և ամենայն Հայոց հայրապետական իշխանութիւնը, զոր օրինական հաստատութեամբք անխախտ ուզեցին և կ'ուզեն Ռուսական ինքնակալք, անդստին ի տիրապետութենէ իւրեանց ի վերայ երկրին Այրարատայ. — և ամենազգի ազատութիւնք զորս շնորհեցին և կը պաշտպանեն Պարսկական ինքնակալք քանի մը դարէ ի վեր. — մեզի համար բաւական են՝ որ եթէ ուզեմք, առանց իրաց ներկայ դիրքը աւրելու, և առանց դիւանագիտական և զինագիտական խնդրոց տեղի տալու, նոյն իսկ պետութեամբ բաժանեալ Հայաստանի մէջ Հայութեան միութիւնը պահպանեմք և պաշտպանեմք, վայելելով այն յարաբերութեանց ազատութիւնը որ վերոյիշատակեալ առանձնաշնորհութեանց արդիւնք են, և որոց համար Հայք չեն դադրած յայտնել իրենց երախտագիտութիւնը, զոր և ես կը փութամ համարձակաձայն յայտարարել:

Այդպէս և այդ բաժանումն, որ թերեւս ամենէն աւելի ծանր կ'ըմբռնուի, և որոյ արդիւնք ոչ սակաւ վնասակար են միութեան, և ոչ այս կ'ապստամբի մեղմացուցիչ դարմանոց միջոցներուն, և ինքն անդստին յիւր ներքին հանգամանաց կ'ընձեռէ բարեսէր և միասէր Հայոյն ոյն գործնական կերպերը, որոց պէտս ունի իւր արդի բաժանմանց կացութիւնը: Չորս գլխաւոր բաժանումները, որք են եկեղեցեալ՝ ազգալ՝ տեղեալ և պետութեամբ բաժանմունք, կարգաւ քննեցինք ի յարաբերութեան ընդ դարմանոց, և յայտնապէս ցուցուցինք թէ ցոր վայր այդ բաժանմունք հարկեցուցիչք են և մնացականք, և ցոր վայր և որով կերպիւ հնար է այդ բաժանումները մեղմել, կամ թէ

իրենց հետեւանքները նուազեցնելով Հայութեան միութեան, — որ ըստ որում սկզբունք՝ անեղծ է և մարդկային կամքէ անկախ, — գործնական և գործադրական կերպով նպաստել և զօրանալուն ձեռնտուութիւն ընել:

Ամէն բաժանումները ջնջելով և բառնալով, քաղաքական կամ եկեղեցական՝ իրական և զգալի միութիւն մը կազմել մեզի առ այժմ անհնար է. Հայութեան միութեան այս ճանքուն վրայ չեմք կրնար առաջնորդել. բայց ոչ թէ պէտք է որ լքանիմք, և թողումք Հայութիւնը իւր վատարագգ վիճակին ձեռքը, առաջնորդուիլ ըստ կոյր բաղդին բերման: Քաւ ի մէջ այսպիսի ճակատագրական սկզբանց գործադրութիւն: Մեք շատ ազէկ կարող եմք բաժանմանց դէմ հակակշիռ գարմաններ պատրաստել, և բաժանմանց ներքեւ ալ միութիւն գործադրել. և այս ընելու համար կրրնամք բաղադրեալ կեդրոն մը կազմել մեր միութեան, որ թէև Եւրոպական ազգաց միութեան ոճէն տարբեր ըլլայ, տակաւին իրական է և իրական արդիւնքներ կ'ունենայ: Այդ բաղադրեալ միութեան ակնարկելով ի վեր անդր, կոչեցի է զայն մաս մը տեղական, մաս մը ուսումնական, մաս մը վարչական, և մեծ մաս մըն ալ եկեղեցական: Բաղադրեալ կեդրոն անուանելուս պատճառը՝ ոչ այնչափ մի և նոյն անձը շատ կերպերով միութեան պարտաւորելու դիտմամբ է, որչափ զանազան անձերը զանազան կերպերով նոյն միութեան մօտեցնել: Աւելի պարզելու համար խօսիցս իմաստը հարկ կը սեպեմ՝ զեկուցանել, թէ երբ երկու Հայեր իրարու միացած են այսօր, ոչ միշտ նոյն յարաբերութեան ներքեւ են. և մինչ մէկ զոյգը եկեղեցական միութեամբ միաւորեալ է, ուրիշ զոյգ մը սոսկ տեղական բնակչութեամբ միաւորեալ է, մինչ երրորդ մըն ալ կրնայ մի-

այն ուսումնական ընկերութեանց կապով միաւորուած ըլլալ : Մեր բազմատեսակ բաժանմանց հետեւութիւնն է այդ , որոց վրայ բաւական խօսած ըլլալով առաջին մասին մէջ , չեմ ուզեր կրկին նոյն նիւթին վերադառնալ :

Այսօր եկեղեցական միութիւնը Հայութեան ամենամեծ մեծամասնութիւնը կը միացնէ , իբր զի գրեթէ երեսուն և հինգ առ քառասուն , որ է ասել իբր ութսուն և եօթն առ հարիւր , Սրբոյ Էջմիածնայ ամենայն Հայոց Հայրապետական Աթոռոյն իրաւասութիւնը և դաւանութիւնը կ'ընդունի , և եկեղեցեաւ միութիւն մը կը կազմէ , թէպէտ բաժանեալ տեղեաւ և պետութեամբ կամ հպատակութեամբ : Դարձեալ միւս այլ չորս առ քառասուն , որ է ասել իբր տասն առ հարիւր Սոյ աթոռոյն իշխանութեան ենթարկուելով , թէպէտ կը բաժանի եկեղեցական իրաւասութեամբ , այլ կը միաբանի դաւանութեամբ , որովհետև դաւանութեամբ շտաբերի իշմիածնայ աթոռէն . և միւս կողմէն ալ վարչական միութիւն մը կազմէ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան ներքեւ , և այսու կը միաբանի միւս Հայոց հետ՝ որք էլ միածնայ աթոռոյն իրաւասութեան կ'ենթարկին : Եթէ հնար ըլլար որ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան վարչական միութիւնը միաւորէր յինքն այլ եւս Հայ եղբայրները՝ որք եկեղեցական և դաւանութեան բաժանմանց պատրուակաւ վարչական կամ ազգային բաժանումներ ստեղծեցին , ահա բոլոր Հայութեան երկու մասերէ բազադրեալ միութիւն մը կ'ունենայինք , և այս ալ շատ օգտակար կրնար ըլլալ : Բայց չկարենալով այդ միութեան գործադրուելուն վստահիլ , առայժմ կը թելադրեմք միւս ալ երկու մասեր . յորոց մին է տեղականն , այն է Հայաստանի մէջ և Հայաստանէ դուրս միատեղ բնակող , և եկեղեցեաւ և ազգաւ :

այսինքն դաւանութեամբ և վարչութեամբ բաժանեալ Հայոց մէջ բարի դրացութեան միութիւն մը ստեղծել . և ոչ թէ եկեղեցական բաժանմանց գրգռութենէն մղուելով և մոլեւանդն պաշտօնէից խօսքերէն յորդորուելով , Հայ ազգայնութեան և ընդհանուր Հայութեան բարւոյն դէմ մտքառիլ , մինչ իսկ մատնութեան չարաշուք ազտիւ վարակիլ . ինչպէս ատեն ատեն և տեղ տեղ այդպիսի հակազգային վատութիւններ հանդիպեցան և կը հանդիպին . և վերջին ժամանակներուն մէջ ալ Ուլնիոյ խնդրոյն նկատմամբ գործուած ըլլալը ցաւով և ամօթով լրագիրներու վրայ ընթերցանք : Միւս մասն ալ զոր սրտի մտօք կը թելադրեմ , ուսումնականն է . այս է ուսումնական ընկերութեանց կազմութիւնը անխտիր յամենայն հայրերոյ և հայուհեաց , և դարձեալ մասնաւոր ընկերութեանց՝ որք կազմեալ են ի սփիւռս Հայութեան , մի կեդրոնի ներքև միանալը , որ ամենեցուն աշխոյժը միացնէ , գործերը համաձայնեցնէ , և նպատակները յարաբերութեան մէջ պահպանէ : Այդ կեդրոնն ալ , ինչպէս ըսինք , կոստանդնուպոլսոյ երկից գլխաւոր ընկերութեանց միաւորութիւնն է , և զայն կազմակերպել նոյն իսկ երկից ընկերութեանց պարտքն է , պարտք մը՝ զոր , ըստ գաղղիական առածին , իրենց մեծութիւնը իրենց վրայ կը դնէ : Այդ կեդրոնին ներքև միացեալ Հայերը՝ ուղղակի կամ անուղղակի Հայութեան մեծ կեդրոնին միաւորութեան կը մասնակցին , վասն զի ընկերաց մեծագոյն մասը արդէն ուղղակի եկեղեցեաւ և ազգաւ մեծ կեդրոնին հետ միաւորութեան մէջ կը գտնուին :

Այդ ոճը կարելի է , այդ ոճը դիւրին է , այդ ոճը բանաւոր ալ է , ցորչափ բաժանումներ կան զորս բառնալ մեր ձեռքը չէ : Այդ ոճը ո՛չ անհատից խիղճը կ'ամբօրիսէ , ո՛չ մասնաւորաց շահերը կը խափանէ , ո՛չ դիւա-

նագիտաց քունը կ'արգելէ, ո՛չ զինուորաց գունդերը կը դղրդէ, ո՛չ եկեղեցականաց դիրքը և օգուտը կը վրդովէ։ Աշխարհք գիտէ Հայութեան հոգին, ես ալ Հայութեան քարոզիչ՝ ուրիշ հոգի չեմ կրնար ունենալ, և ոչ նորանոր տեսութեանց հետամուտ կրնամ սեպուիլ։ Հայութեան ի սէր կը խօսիմ, կ'աշխատիմ, կը գործեմ, և Հայութեան միութեան կը բաղձամ, և միութեան դէմ արգելքներ տեսած ատենս, ամէն խաղաղական, օրինական և անմեղ միջոցները զննելով՝ յարմարագոյն դատածս ձեր առջեւը կը դնեմ։

Որպէս զի ակնկալեալ բարի հետեւանաց հասնիմք և մեր բազմապիսի բաժանմանց դարման, Հայութեան համար առ այժմ՝ կարելի բաղադրեալ ըսած միութիւննիս գործադրուի, պայման մը կարեւոր է գլխաւորապէս, և է այս. քանի որ այդ միութեան համար հարկեցուցիչ օրէնք մը և բռնադատիչ միջոցներ չեմք կարող գործածել, և քանի որ մնացական բաժանումներ եկեղեցեաւ, ազգաւ, տեղեաւ և պետութեամբ և այլ զանազան պարագայիւք, արգելք պիտի ըլլան մեր ջանից արդիւնք եղող միութեան, հարկ է որ ամէն Հայ ամենայն զօրութեամբ արիանայ մասնաւոր դժուարութեանց դէմ դնելու, այս կամ՝ այն կողմէն յառաջ եկող սրգելքները յաղթելու, այս կամ՝ այն անձին գրգռմանց չանսալու, մանաւանդ ամենեւին չը համոզուիլ այն խրատ տուողներուն խօսքերէն՝ որք յանուն Քրիստոսի և յանուն աւետարանին, ազգին մէջ բաժանում և տարաձայնութիւն կը սերմանեն։ Այդպիսիք մեծ զէնք մը ունէին ձեռուրնին և անով կը պատերազմէին. այդ զէնքն ալ Հայութեան խեղճ ու յուսահատ վիճակն էր, և ազգութեան սկզբունքը իբր սխալ և դատապարտեալ ցուցնելու ջանքը։ Այսօր այդ երկու զէնքերնին ալ, Տեառն յաջողելով, բխացան և տկարա-

ցան : Հայութիւնն իբր յուսալից կը կերպարանի մեր գիմնացը , և այնչափ աւելի կը շատնայ իմ համոզողութիւնս ի մասինս , որչափ ոմանք Հայութիւնը իբր երկիւղալի ծնունդ մը համարելով , զայն անդոստին ի խանձարուրս կ'ուզեն խղզել , և կը կարծեն ինքը զինքերնին խաբել պնդելով թէ Հայաստան և Հայութիւն չը կոյ , մինչ այդ կարծեցեալ չգոյին չգոյութեանը համար հատորաւոր թղթակցութիւններ կը փոխանակեն , շարունակ ինդիքներ կը յուզեն , և բազմաթիւ պաշտօնավարներ կը յոգնեցնեն : Ինչչափ աւելի կը տեսնամք մեք այդ եղածները , ինչչափ աւելի կ'իմանամք գործուած հակառակութիւնները , այնչափ աւելի պէտք է որ սրտերնիս քաջալերութեամբ լեցուի , կարելի միութեան փարիմք , և անով ընդ իրեարս զօդիմք , և անոր իրականութեան և արդիւնաւորութեան վրայ հաւատք և վստահութիւն ունենամք . և գիտնամք՝ թէ անկէց է մեր փրկութիւնը : Եթէ մեք բարեաց կ'սպասեմք , եթէ բարեաց ալ մայր միութիւնն է , ինչպէս ըսաւ մեր երանաշնորհ հայրենասէր վարդապետաց առաւել հռչակեալը , ո՛չ ապաքէն Հայութեան միութիւնն ալ է այն սիրելի ծնողը որուն պէտք է փարի ամէն Հայ , թէեւ կերպով մը բաժանեալ , բայց որ կ'զգայ իւր Հայ ըլլալը :

Որպէս զի կարելի միութիւնը գործադրուի , մտածեմք թէ մեր Հայութեան հոգին շներեր մեզ ամենազգի և բռնական միութեան թեկն ածել . շուտով Հայը մասնաւոր գործունէութեան բաղձանօք և արտակերպրոնական ոճոյն գիտմամբ , առ որս իւր հոգին զինքն բնականապէս կը մղէ , ներքին բաժանմանց կը յորդորուի : Հայութեան միութիւնը գործունեայ ընելու համար միշտ բաղադրեալ , դաշնակցական , սահմանադրական ձեւ մը ընդունելով պարտաւոր եմք : Երբ

բաժանմունք որք կան առանց մեր կամաց, մեր կամօք իրարու յօգակապին իբր միոյ միութեան յարաբերական անդամք և դաշնակցեալ մասունք. կրնայ խնդալ ամէն Հայ, ունենալով գոնէ այն միութիւնը, այն իրական միութիւնը, առանց որոյ բոլոր Հայ արեան սերունդը չկրնար միաբանօրէն իւր ընդհանուր նպատակին դիմել:

Խօսքիս ծայրը հասած ատենս կը մտածեմ, թէ ունկնդիրքդ զարմացած պիտի ըլլաք տեսնալով. թէ այնպիսի նիւթեր և այնպիսի կէտեր եկայ բացատրել այնպիսի քաղաքի և տեղւոյ մէջ, ուր թերեւս ամենէն քիչ այդպիսի խօսից տեղի կայր: Գիտեմ, սիրելիք, թէ ձեր քաղաքին երրակի թաղերը չունին այնպիսի բաժանումներ ազգաւ և եկեղեցեաւ, որպիսիք ուրիշ թաղերու և քաղաքներու մէջ զգալի են: Գիտեմ թէ ուրիշ միութեան պարագայից մէջ ալ Ոսկեքաղաքի գրեթէ բնակիչք ուրիշներուն օրինակ ըլլալու պարծանքը իրաւամբ կը կրէք: Առջի բանախօսութեանս մէջ խնդակցեցայ ձեզի հետ. վասն զի միութեան ասպարէզին մէջ նոր ազգօգուտ սկզբնաւորութիւն մը կատարեր էիք Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեամբ. նոր ազգօգուտ սկզբնաւորութեան մը համար ալ այսօր պիտի խնդակցիմ, չորից թաղից դպրոցական միաւորութիւն մը կազմելուն առթիւ, որոյ արդիւնաւորելուն վստահեմ, և որոյ օրինակը կը յուսամ թէ ուրիշ մայրաքաղաքիս թաղերն և գաւառներն ալ նմանողութեան պիտի յորդորէ: Հայութեան միութիւնը, թերեւս ամենէն քիչ հոս յարմար էր բացատրել, ուր գրեթէ ըստ ամենայնի յարգուած, և նախանձեցի կերպով գործադրուած է:

Սակայն ոչ միշտ ճշմարտութիւնք կը քարոզուին միայն հոն՝ ուր անարգուած են կամ մոռցուած են.

Յարի սերմերը՝ լաւագոյն է մշակեալ արտերու մէջ հիանել, որպէս զի հոն ուռճանան և պտղաբերեն, և

իրենց պտղովն բոլոր չրջակայից բնակիչները յագեցը-
նեն : Իմ խօսքերս կ'ուղղուին այն ամէն անձանց որք
յանձնառու կ'ըլլան իրենց վրայ Հայ անունը կրել . այն
ամէն անձանց որք կը կարծեն փառաւորուիլ իրենց Հայ
ազգութեամբը : Ո՛ւր էր թէ իսպառսպուռ բարձուէին
ամէն կերպ բաժանմունք՝ որք Հայութիւնը կը փեռե-
կեն , — և որովհետեւ այդ բանը իբր անհնարին կը ներ-
կայանայ — , ո՛ւր էր թէ Հայութիւնը կազմէր այն իրա-
կան միութիւնը , որով մեր ազգութեան ամէն մասունք,
ամենայն ինչ՝ որ Հայ է , և ամենայն ոք՝ որ Հայ է , կը
կապուի Հայութեան հետ . և Հայութեան մոխիրներէն
կը վերածնի Հայութեան միութիւնը , իբր երջանիկ փիւ-
նիկահաւ՝ որ ոչնչանալէն ետքը դարձեալ կը կենդանա-
նայ իւր իսկ մոխիրներէն , առանց արտաքին գործողի
կամ ձեւողի մը ձեռնտուութեան : Օր և ժամ ե-
ղաւ , եղբարք , որ մեր Հայութիւնը միութեամբ կը
փայլէր և յաջողութեամբ կը պանծայր և պատուով կը
փառաւորուէր : Այն օրերը այսօր պատմութեան էջե-
րուն մէջ կը տեսնամք թաղեալ , ինչպէս թաղեալ են
նշխարք մեծութեան մերոցն նախնեացն մեր Հայրեն-
եաց հողերուն և ջուրերուն խորոցը մէջ , Հայութիւն և
Հայաստան օր եղաւ որ անյիշատակ մնաց , և թէպէտ
կայր , բայց այնպէս իբր թէ չկայր . այն ամենայն հան-
գամանք որք գոյութիւն մը տեսանելի և լուսաւոր կ'ընեն
իրեն կը պակսէին . այն վիճակին մէջ կրաւորական և
տոկուն միութիւն մը կայր , ոչնչացնող հեղեղաց մէջ
թաւայեւրով՝ անեզր Ովկիանին անդնդոց մէջ չսուզանե-
լու համար : Յաջորդեց իմացական միութեան և ա-
ռաքինական և ըղձական միութեան ժամանակը . և
յայնժամ Հայութիւնն սկսաւ երեւան դալ , թէ ոչ
իբր իրական ինչ միացեալ , այլ գոնէ իբր մասունք
և տարերք՝ ուստի հնար էր յիրաւի միութիւն մը կա-

